

Արքի Յովհաննիսեան

Լեհոն ՇԱՆԹ ԵՒ ԻՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ներթր պատրաստուել է «Փարիզ՝ «Սփիլոբահայ Թատրոնների Երեւան» Անդրանիկ Փառատօն»ի օրերին, իբրև քատերարանախօսությունը ներկայացուելու համար (Տե՛ս Յառաջ, Յուլիս 2, 3, 4, 1991, Փարիզ):

Լուսել ու գիտուել է «Գ. Սունդուկեանի Անուան Պետական Ակադեմիական Դրամատիկական Թատրոն»ում, 1991 թուի Մայիս 18ին, պատկերազարդուած Շանթի թատերակների զանազան հրատարակութիւններից ու բեմադրութիւններից պատրաստուած սահմաների շուցադրութեամբ և երգային, Հատուածների կատարմամբ։ Թատեցուցադրութիւնն աւարտուել է Նղբայլածը խաղի երրորդ արարաբանախօսութիւնն աւարտուել է հաղի երրորդ արարաբի երկու տեսարանների բեմադրութեամբ։

Ներկայացումը պատրաստուել էր Սփիլոբի և Հայրենիքի թատերական ուժերի մասնակցութեամբ։ Աշխատակցել էին Փարիզից՝ Ժիրայր Չոլաքեան (Նաղաշի և Կեանի Դերերով), Արմենէ Գրիգորեան (Երաժշտական բաժինների պատասխանատու)։ Երևանից՝ Հենրիկ Մալեանի Անուան Կինոդերասանի Թատրոն (Հարճի, Արտասագդի եւ միւս դերերի մարմնաւորում) և Կոմիտասի Անուան Պետական գործիքների կոնսերվատորիայի Կամերային Երգչախումբ (Թօվուկների և կան Կոնսերվատորիայի կամերային Երգչախումբ)։ Բեմադիր՝ Արքի Յովհաննիսեան։

Թատերաբանախօսութեան Հեղինակը գնահատուել է՝ Հայաստանի թատերական Գործիչների Միութեան «Դիպում» ով եւ ստացել է՝ «Շանթի թատերգութեան բեմական լեզուի նորովի մեկնութեան համար» նշումով «Փառատօնի Ժիլիի Յատուկ Մրցանակ»ը։

Գրութիւնը հրատարակւում է Հեռոն Շանթի թատերագրական վաստակի Հարիւրամեակի առթիւ (1901-2001)։

ՄՈՒՏՔ

Լեւոն Շանքի բատերական մտածողութիւնը պարզաբնելու համար, կենսական են նրա կեանքի վերջին տարիներին, իր խոյ խմբագրութեամբ, Պէյրուք կազմուած՝ Լեւոն Շանքի երկերը, ընդհանուր խորագիրը կրող, տասնեւմեկ հատորները։ Հեղինակի կեանքի օրերին, լոյս են տեսել ընդամենը եօթը հատոր՝ հետեւեալ հերթականութեամբ։

Ա. Հատոր. Գեղարուեստական գրութիւններ [1891-1894] (1946)

Բ. Հատոր. Գեղարուեստական գրութիւններ [1896-1904] (1946)

Թ. Հատոր. Ընդհանուր ակնարկ մը Հայ բանահրւութեան (1946)

Գ. Հատոր. Գեղարուեստական գրութիւններ [1909-1921] (1947)

Դ. Հատոր. Գեղարուեստական գրութիւններ [1923-1941] (1947)

Ե. Հատոր. Ընկերաբանական եւ գրաբանական Հարցեր (1948)

Զ. Հատոր. Կրթութիւնը ընդհանրապէս (1951)

Յետ մահու հրատարակուել է Է. հատորը՝ Ռւսում ու կրթութիւն գպրցական (1952), հեղինակի որդու՝ Սուրէն Շանքի հետեւեալ բացարութեամբ։ «Հան գուցեալ հայրս այս հատորի պատրաստութեանը աշխատի սկսաւ հիւանդութեան ծանր օրերուն։ Մինչեւ մահը, անկողնէն կրցաւ թելադրել առաջին չորս հատուածները միայն։ Մնացեալ հատուածները իր բողած ձեռագիրներն են, որ եղածին պէս յանձնած եմ տպագրութեան։ Բայց դժբախտաբար, հայրս պէտք եղած ուժն ու ժամանակը չունեցաւ կատարելու իր ծրագրած ընդլայնումները եւ ամրող գործը ներարկելու վերջնական սրբագրութեան։ Իր խոյ պահանջին վրայ, այս կետը կը յանձնեմ ընթերցողի ուշադրութեան»¹։

Իբրև Ը. հատոր, հրատարակուած շարքի մէջ ներառուած է՝ Քերականութիւն արեւմտեան Հայերէնի չորս պրակները եւ Հայերէնի բառակազմութիւնը եւ յուզական զէնքերը լեզուի (1950) դասագիրքը։ Մինչ օրս անտիպ են մնացել, հոգեբանութեան յատկացուած, Ժ. Եւ ԺԱ. հատորները²։ Նշուածից՝ «Հոգեկան կարողութիւններու զարգա-

¹ Լեւոն Շանքի երկերը (ԾԵ), Է. Հատոր, Պէյրուք, 1952, էջ 5:

² Սուրէն Շանք, 1988 բուին Փարփա, սողերիս գրողին, Լ. Շանքի երկերի ձեռագրերի մասին տուից հետեւեալ տեղեկութիւնները։ Լ. Շանք հրատարակուած նիւթերի ձեռագրերը սովորաբար այլի է։ Անտիպները գտնվում էին իր մօս։ «Հոգեբանութեան երկու հատորներ»ը հրատարակութեան չէին

ցումը մինչեւ մարդ» հրատարակուել է Ակոսի մէջ¹: Այն լոյս է տեսել նաև առանձին գրքոյկով: Տասն երկու հասորներից դուրս են մնացել, մի շարք անտիպներ եւ մամուլի մէջ ցրուած գրութիւններ ու քարգ մանութիւններ, օրինակ՝ Վոյնիչի թոռը եւ Իբսենի ժողովուրդի թշնամին² եւ այլն:

Եթէ ստուգելու լինենք Շանրի խմբագրած հասորների բովանդակութիւնը, յստակ պիտի նկատենք, որ տասնեւմեկ հասորներից ընդամենը չորսն են (շուրջ 1500 էջ), որ ընդգրկում են գեղարուեստական երկեր։ Մնացեալ եօր հասորները (աւելի քան 2000 էջ) ներկայացնում են ընկերաբանական, գրաբանական, կրթական, քերականական և հոգեբանական ու հայ բանահիւսութեան վերաբերող նիւթեր։ Նկատի ունենալով, որ երկերի ընդամենը մեկ եօրերորդն է (շուրջ 500 էջ) որ վերաբերում է քատրոնին, նշուած մեծամասնութիւն կազմող, միւս գրութիւնների մեջ կիրառուած մտածողութեան լոյսի տակ է, որ կարելի է ընդհանրապէս ըմբռնել եերինակի մշակած քատերական մտածողութիւնը եւ գնահատել երա իւրայատուկ արժանիքները։

Լեւոն Շանթի ինքնուրոյն բեմական երկերի մասին, բազմիցս է գրուել ու խօսուել: Յանախ նրա մշակութային ներդրումը նմանեցուել է արեւմտեան հեղինակների գործերին: Նիցչէ, Վագներ, Հառլափ Ման, Միտերինգ ու Իրսկն անուններ են, որոնց ազդեցութիւնը շարունակ ընդգծուել, յիշուել ու շեշտուել է Շանթի քատերական երկերը ներկայացնելիս: Ցաւօք՝ արտաքնապէս դիտուածն ու նկատուածն է, որ նման եզրակացութիւնների է յանգել: Բանակերները, մեծամասնութեամբ բեմին ու նրա արտայայտչանեւերի իրական դրդապատճառներին անծանօթ լինելով, յիշուած հեղինակներին բնորոշող էական հարցերը չըմրոնած՝ անփիտակից նրանց երկերին ծընունդ տուող ակունքներին ու դրանց առըն չուող մշակոյթների խնդիրներին, մեթենայա-

յանձնուել ի պատճառ որոշ անձանց առարկութեան, թէ՝ «հեղինակի հայ-
եացքները գիտական չեն եւ վիճելի են». Ինչ որ, իբրև պատճառաբանութիւն,
մեզ անտեղի բուաց ու իբրև կեցուածք՝ միանգամայն անընդունելի: Ըստ՝ Ս.
Շանթի, կային նաև անուարտ մնացած քատերակմերի ձեռագրեր: Մէկը՝
Պարսկաստանի «Հաշիշին» աղանդական շարժման մասին:

Ukou, Φέρνι:

² Հենրիկ Իբրահիմ Գողովորդի թշնամին լոյս է տեսել Նորվեգիա՝ Նյոյեմբեր 28, 1882-ին: Ներկայացուել է՝ Յունուարի 13, 1883-ին: Այսուն Հափումենանի քարգմանառութեամբ, 1895 թուից յանախ է խաղացուել հայ բնեմբում: Յառա-կա պէտ յայտնի է Յովիկանելս Արէլեանի կատարումը (Թիֆինս, 1895): Բնմա-դրուել է հասել Նիկոլ Ալբալիանի մասնակցութեամբ (Թեհրան, 1911):

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

բար իրար արձագանելով, առանց իրենց տեսակէտն հիմնաւորել կարողանալու, թերի կարծիքներ են տարածել:

Դրա բերումով հայ բատերագիտութիւնը սխալ եզրակացութիւններ է հանել եւ այսօր Շանքի բատերական մտածողութիւնը կրում է մակերեսային՝ ոչ հարազատ շեշտ: Շանք իրեւ բատերագիր, ընդհանրապէս գնահատուել ու դատուել է մեծերի շարքը: Ասկայն, ինչո՞ւ է մեծ եւ նրա բատերային ներդրումը եւ մտածողութիւնը ինչով է եզակի ու նշանակալից, մնացել է առեղծուած ու մշուշապատռել է լոգունգներով: «Մեծ հեղինակ է», «բատերագիր Շանք օժուած է ձեւի գեղեցկութեան գգացու մովք», «քեմական լեզուն տիրական արժանիք է», «քեմական լեզուն տիրական գործիք մըն է», «Եւրոպական մակարդակի է», «...շարժանկարային արուեստով միայն կարելի է կատարելապէս բեմադրել» եւ այն, եւ այլն: Նշուած թիւրիմացութիւնից հեռու են մնացել ասկաւաթիւ քանակներ. յատկապէս նախ երկուը՝ Նիկոլ Աղբալեան¹ ու Գերենիկ Դեմիրճնան² եւ ապա, հեղինակի աշակերտ՝ Գրիգոր Շահի նեան³:

Շանքի բատերական մտածողութեան մէջ, միշտ գործօն են ու էապէս բանում են, հայկական մշակոյթի հիմնական խրանները: Դա պէտք է նկատել, նրա բանահիւսական կառոյցների, հայ մշակոյթին իւրայստուկ՝ հեղինակի ըմբռնած հայ ժողովրդի եսին առընչուող, ներքին շարժանիքներից ծնունդ առած, իրագոր ծումների ու դրոյթների մէջ: Այդ մասին պիտի անդրադառնանք յաշորդ միւս բաժինների մէջ: Այժմ շեշտենք, որ նշուած Եւրոպական հեղինակների արձագանները, Շանքի երկերում պարզապէս, իր ժամանակաշրջանի բաղաժակիրք մշակոյթների հետ միասեղ բայլելու հարցին են առընչուում եւ բնմախաղերի մէջ դրանք դրսեւորուած են միայն արտաքին երեւոյքների մէջ ու էական դեր չեն կատարում: Եւրոպական գիտական մտֆի միակ էական ազդեցութիւնը, գախս է Զուրիխի եւ Լայփցիկի համապարաններում, տասնիններորդ դարի վերջին տասնամետակում, աշխարհահոչչակ հոգեբան՝ Վիլհելմ Վունտին⁴ աշակերտելուց: Վերջինի ուս-

¹ Ն. Աղբալեան, Գրական-քննադատական երկեր, Պէյրութ, 1959, էջ 1-84:

² Գ. Դեմիրճնան, Երկերի ժողովածու, Հատոր XIV, Երեւան, 1987, էջ 173-190:

³ Գ. Շահիննան, Զիւներն ի վեր, Մենագրութիւն Լ. Շանքի մասին, Պէյրութ, 1967:

⁴ Վիլհելմ Վունտ (Wilhelm Wundt, 1832-1920): 1867 բուին Հայութերգի համալսարանը, պաշտօնապէս ծրագրում է նրա «Բնագիտական Հոգեբանու-

մունիքը, յատկապէս փորձառական հոգեբանութեան մարզում, գունաւորել ու խմաստաւորել է Շանթի ապրած թէ՛ հայ մշակոյթը եւ թէ՛ Եւրոպական մտքի ընդհանուր ընկալումը։ Նա այդ գիտութեան օճանգակութեամբ է իր զգացումներն ու յոյզերը միակցրել եւ գաղափարների ու տեսութիւնների հասել։

Նիւթը շօշափելու համար, նախ պիտի անդրադառնանք նրա միակ ոչ ինքնուրոյն՝ Իրսէնի ժողովուրդի թշնամին թատերակի թարգմանութեան։ Շանթի հայերէն տարրերակը թատրոնի մարզում նրա կեանքի «կարապի երգ»ն է։ Այն էական դեր ունի վերջինիս թատերական մտածողուրդինը, գործնական առումով, պարզաբանելու գործում։ Ժողովուրդի թշնամին հայերէնի է վոխադրուած գերմաններէն թարգմանութիւնից տասնեւիննը տարի յետոյ (1968, Պէյրութ)։ Շանթ, իր կեանքի վերջին տարիներին, դիմելով Իրսէնի երկին, գործնական համբով լաւագոյնս է պատասխանել բանասէրներին ու իր հնեադատներին։ Նա, որ տարիներ շարու նակ լուս հետեւել էր իր թատերական ութ երկերից միայն վեց վերնագրերի մարմնաւորմանը, անձամբ միշտ հեռու էր մնացել բեմադրական աշխատանքներից։ Բեմից հեռու էին մնացել նաև նրա երկերից երկուսը՝ *Ուրիշի Համարը* եւ *Շղթայւածը*, որոնիք բեմ հանուցին յետ մահու¹։

թիւն» դասախոսութիւնների շարքը, որոնիք երանակում են 1873-74 քուեթին։ Լայփշիկի համալսարանում, 1875 քուին հիմնում է հոգեբանութեան նուիրուած առաջին գիտական փորձառական կենդրոնը։ Կատարում է լողաւտեսական ու զգացողութեան փորձեր։ Ռւասմնասիրել է՝ զգացողութեան, ընկալման, հակազդեցութեան տեսողութեան, ուշադրութեան, գիտակցութեան, ընկալման, հակազդեցութեան մասնակի ժամանակ, դիտուել է նաև թեհրան (1959)։ Հիմք է յուգական եւ յարաբերական մասնակի վերաբերող հարցերը։ Հիմք է դրել փորձառական հոգեբանութեան։ Համոզուած էր որ ընկերային հոգեդրել առանձին առաջին բանութեան նիւթ է նաև զգացական կամ բանութինը, աւելի բարդ ուսումնասիրութեան նիւթ է նաև զգացական կամ յիշողութեան մտային ու հոգեկան գործարանները։ Նրա տեսութիւնները, հակադիր համբով, մեծ դեր են ունեցել Gestalt հոգեբանական դպրոցի մտաւորման մէջ։

¹ Շղթայւածը կրթասումներով՝ բեմադրուել է Պէյրութ, Համագգայինի Թատերասէրներու Միութեան կողմից (1955/56)։ բեմադիր՝ Ժորժ Սարգիս սեան։ Նոյնը հիւրախանդերի ժամանակ, դիտուել է նաև թեհրան (1959)։ Խաղն իր ամբողջութեամբ, առաջին անգամ բեմադրուել է երկի գրութեան եօրա հասունամնակի առթիւ, Փարիզ՝ Saint-Louis de la Salpêtrièr տաճարի մէջ (1988)։ բեմադիր՝ Արքի Յովհաննիսեան։

Ուրիշի Համարը (1914-ի տարրերակը) բեմադրուել է Թեհրան (1973)։ 1946-ի օրինակը ներկայացնուել է Երևան, Սունդուկեան Թատրոնում եւ ասպա Փարիզ՝ «Թատերական Ընթերցումներ» ծրագրերի մէջ։ Երեք տարրերակների

Լեւոն Շանք եւ իր թատերական մտածողութիւնը

«Հեղինակը, զուտ հեղինակը, երբէք չկայ եւ չի կրնար ըլլալ քննի վրայ, ամէն անգամ կայ միայն այսինչ խաղի այսինչ բացատրութիւնը, այսինչ ըմբռնումը, այսինչ ձեւի մարմնաւորումը»¹: Այս պարզ ու նախնական բուացող մտքի ծալքերում, Շանք պրտայայտում է, թատերական արուեստի նկատմամբ, իր մտահոգութիւնը: Դ. Դեմիրճեան, խօսելով թատերագիր Շանքի մասին, յիշել է նրա կեցուածքը Հին աստուածների բեմադրութեան օրերին:

Պիէսը համարում էր ընթերցման դրամատուրգիա եւ իրեն էլ՝ գրող-դրամատուրգ: Նա ապրում էր գրականութեան մժնողորսում: Այսպիսով՝ նրա գործը ունէր եւ իր գրականական կողմը, գերը:

Աւելորդ եւ ծիծաղելի էլ էր Շանթին հարցումներ անելը, թէ ինչպէս է պատկերացնում իր պիէսի բեմադրութիւնը, ինչ խորհուրդներ կարող է տալ գերասան ներին: Զգիտեմ, նա գնա՞ց արդեօք փորձերին, եկա՞ն նրա մօտ դերասանները՝ խորհուրդ հարցնելու: Թերեւս այդ տեղի ունեցաւ: Բայց որ Շանթին ամենից քիչ, լաւ է ասել՝ շատ հազուագիւտ էր կարելի տեսնել թատրոնում, դա կարող եմ հաստատ ասել:

Ի՞նչ է նշանակում սա: Սա նշանակում էր կամ անշահախնդրութիւն դէպի միայն թատրոնի սպեցիֆիկան, կամ անբաւարարութեան արտայարութիւն հայ թատրոնի կոլլատորայի հանդէպ:

Թատերական երկերի բեմադրութեան համար Շանքի տուած խորհուրդների մասին, մեզ է հասել ընդամենը մէկ վկայութիւն: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան օրերին՝ 1919ին, մշակոյթի նախարար Նիկոլ Աղբալեանի արտօնութեամբ կազմակերպուած Վարդան Միրզոյեանի «Դրամատիկական ստուդիա»² մէջ Շանք, Աղբա-

(1905, 1914, 1946) համարքումը, բեմադրուել է Փարիզ՝ Théâtre Espace Acteur (1998). բոլորի բեմադիրը՝ Արքի Յովհաննիսեան:

¹ «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամսագիր, Բոստոն, Յուլիս 1929, էջ 85:

Այսույթ գրութեան մէջ բերուած, Լեւոն Շանքի երկերից քաղուած բոլոր հասուածների ուղագրութիւնը համապատասխանում է նրա բնագրի մէջ կիրառուած ձեւին:

² Դ. Դեմիրճեան, Երկերի Ժողովածու, Հատոր XIV, Երևան, 1987, էջ 179-198:

³ Այնուղեա՝ Միրզոյեանից բացի, դասաւանդել են, Դ. Դեմիրճեան, Գ. Լեւոնեան, Վրբ. Փափազեան, Ն. Աղբալեան, Կարա Դարւիշ եւ ուրիշներ: Անանել են՝ Հայաստան Եղիազարեան (Նայիրի Զարեան), Վարդան Թէրզիրաշեան, Մանուկ Մարտրեան, Արտաշէս Յարութիւնեան (Հայարտեան), Գուրգէն Զանիբեկեան եւ մի շարք ուրիշ կարեւոր թատերական գործիչներ:

Արքի Յովհաննիսեան

լեանի ներկայութեամբ, ուսանողների համար մի ժամի անգամ իր թատերգութիւնների մասին վերլուծութիւններ է տալիս ու պատասխանում է հարցերին: Ստորդիայի առաջին տարուայ աշխատանիների ցուցադրութեանը ներկայ գտնուելով, Շանք դիտում է առանց ծպուտմի խաղացուող Հին աստուածների հատուածները: Աւարտուելուց յետոյ եեղինակը բեմ անցնելով, Արեգայի դերը կատարող, տասնութեայ Մանուէլ Մարութեանին, ընդամենը մեկ կարճ ու կտրուկ խորհուրդ է տալիս. «Խորացիր...»:

Վերը հշուած օրերից երեք տասնամեակ յետոյ, ժառանական բուերին, Շանք, որ ապրել էր Հայաստանի Հանրապետութեան կորուստը, իր անձնական կեանեում երկու ծանր կորուստ է ապրում: Մեկը որդու՝ Վիգենի մահը, որ զոհ է գնում Բերլինի ուժքակոծման ժամանակ եւ միւսը կնոշը՝ Զաւոյի²: Նա իր ուսուցչական ու կուսակցական կեանեում եւս ունենում է նոր կորուստներ: Նախ վախճանում է նրա մտերիմը՝ Նիկոլ Աղբալեան. յետոյ, միւս համախոնը՝ Գալապար Իվելիսան, կուսակցական հարցերի բերումով, անորոշ ժամանակով հեռական, կուսակցական հարցերի բերումով, անորոշ ժամանակով հեռանում է ժաղափից: Իվելիսան վարում էր Պէյրութի Համազգայինի Թատերասէրների Միութիւնը, եւ 1932 բուհն եղել էր Շանքի վերջին ինքնուրոյն թատերակի՝ Օշին Պայի անդրանիկ բեմադիրը: Նրա բացակայութեամբ թատերասէրները մատնում են պարապի:

Այդ օրերին, առաջին անգամ լինելով, Լեւոն Շանք գայրացած, լծում է թատերական աշխատանիքի: «Համազգայինի թատերական այս գործը

¹ Մ. Մարութեան. «Վկայութիւն մը, Լեւոն Շանք», Նաւասարդ, Գլենդեյլ, Մարտ 1986, էջ 4:

² Հետաքրքիր է նկատել, որ ժողովուրդի թշնամին թարգմանելուց երկու տարի առաջ, Շանք իրա տարակութեան է յանձնել իր կնոշ՝ Զաւոյի Հ. Իսակնի տարի առաջ, Շանք իրա տարակութեան է յանձնել իր կնոշ՝ Զաւոյի Հ. Իսակնի թարգմանութիւնը: Տե՛ս «Ակոս» Բրանդ բաներախաղի արեւելահայերէն թարգմանութիւնը: Տե՛ս «Ակոս» Բրանդ Ի. Ի. Դ. -Ի. (1947-1948), Պէյրութ: Զաւոյ Ներսիսեան, մանկավար Ժուլի Ի., Ի. Գ. -Ի. Դ. (1947-1948), Պէյրութ: Զաւոյ Ներսիսեան-Սիրուեան, մասնագիտացած Էմիլ Ժակ-Դալքրոզի (Emile Jacques-Dalcroze 1865-1950) կրթական ուիթմիկ վարժանիների ուսմունքի մէջ, առագային գաղթելով Արգենտինա՝ Բուենոս Այրեսի երաժշտանոցում, եղել է Ժագ-Դալքրոզի սկզբունքների տարածողը: Երկու ժոյրեր, իրենց մասնագիտութեամբ, մեծապէս ազդել են Շանքի թշնական ու կրթական մտածողութեան վրայ: Հոգեկան, յուզական եւ մարմնական շարժումների գիտական իմացութեան եւ դրանց գործողութիւնների համադրման հարցում, Շանքի մշակած կրթական ծրագրերի մէջ ակնայալու է Ժագ-Դալքրոզի սկզբունքների կիրառումը:

Լեռոն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

պէտք է շարունակուի, դուք պարտաւո՞ր է՞ շարունակելու, եւ պիտի շարունակի՞ք: Թոյլ չե՞մ տար, որ քանդի՞մ»¹: Այս խօսմերով բատերագիրը մուսաք է գործում բատերասէրների միտրեան մէջ: Դառնում է գործօն անդամ: Մասնակցում է ժողովներին, հաւաքոյթներին, բատերական աշխատանքներին, բատերային ընթերցումներին, սրբագրութեան, դերերի վերլուծութեան եւ նոյնիսկ տոմսերի բուագրման ու կնման գործին: Ցիշուած ժամանակաշրջանի պտուղն է ժողովուրդի թշնամին: Հենրիկ Իբսէնի համանուն բատերակի հայերէն տարբերակը, Շանք աւարտել է 1949 թուի Նոյեմբերին: Փորձերը յատաջ են տարուել երեք հոգուց կազմուած մի մարմնի հակողութեամբ: Շանք հաւատարմօրէն վարել է աշխատանքները, մինչեւ որ վերջապէս՝ Գասպար Իփէկեանի վերադարձից յետոյ, այն թեմ է բարձրացել վերջինիս անմիջական հոգատարութեամբ, 1950 թուին:

Իբսէնի եւ Շանքի կեանքի մէջ զուգահեռ գծելու համար, հետաքրիր է հետեւեալ դրուագը: Իբսէն տաս տարի հայենիից բացակայ լինելուց յետոյ, 1874 թուին կարճ ժամանակով վերադառնում է Նորվեգիա: Սեպտեմբերի 10ի երեկոյեան, ուսանողները քայլարշաւ են կազմակերպում: Գնում են մինչեւ բանաստեղծի բնակավայրը եւ նրան ողջունում են երգերով ու հառերով: Իբսէն ուսանողներին ուղղուած իր շնորհակալական խօսի մէջ յիշում է.

(...) Իմ անձնական կեանքը, ես երբէք ուղղակի բանաստեղծութեան նիւթ չեմ գարձրել: (...) Ուրեմն ի՞նչն է կերտում բանաստեղծին: Երկար տեւեց մինչեւ ես ըմբռնեցի, որ բանաստեղծ լինելու համար, էական է տեսնել, բայց ուշադիր եղէք, այնպէս տեսնել, որ տեսածը ունկնդիրները բանաստեղծնի պէս ընկալեն: Սակայն, միայն ապրուածն է, որ կարելի է տեսնել ու ընկալել: Եւ ապրուածը, արդէն արդի գրականութեան մէջ է պահ տրուած: Այս վերջին տաս տարիներում, ես մտովին, կատարելապէս ապրել եմ իմ բոլոր գրածները: Բայց ոչ մի բանաստեղծ, մենակ ոչինչ չի կարող արարել: Ինչ որ նա արարում է, նրա հետ արարում են նաև նրա հայրենակիցները: Եթէ դա այդպէս չլինի, ապա ի՞նչը պիտի կամրջի ստեղծող ու ստացող մտքերը: (...) Ամէն մի բանաստեղծ, բնածին հեռատես է: Ես հայրենիքը եւ նրա ներկայ կեանքը, երբէք այսքան ամբողջական, այսքան պարզ, այսքան մօտ չեմ տեսել, որքան հեռուից՝ իմ բացակայութեան ժամանակ...»²

¹ Համագույինի Գասպար Իփէկեան Թատերախումբ, 30-ամեակ, 1942-1972, Պէյրուք, 1972, էջ 12:

² Henrik Ibsen, *Speeches and New Letters*, Transl. Arne Kildal, Boston, 1910.

ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

1951 թուի աշնանը, Լեւոն Շանք արդէն ծանր հիւանդ է ու մահնի մեջ է գտնուում: Մի շաբար օր, Հոկտեմբերի 27ին, նա իր մօտ է կանչում աշակերտներից մեկին՝ Պարգև Շիրինեանին.

(...) Տղաս քեզի կանչեր եմ լուրջ աշխատանքի մը համար: (...) Գանք մեր բուն գործին: Գիտես, որ իմ երկերուս ամբողջական տպագրութիւնը չկարողացանք աւարտել. հրատարակեցինք միտպագրութիւնը հատոր. հրատարակելի կը մնան հոգեբանութեան երմիայն եօթը հատոր. հրատարակելի կը մնան հոգեբանութեան երկու հատորներս եւ մանկավարժութեան երկրորդ հատորս: Հոգեբանութիւնը գրեթէ կրնամ ըսել պատրաստ է, յետոյ կը խօսինք անոր մասին: Գալով մանկավարժութեան, կը մնայ թերաւարու: Վիճակս կը տեսնես, աշխատելու անշարող եմ, չեմ գիտեր նաեւ թէ քանի օրուայ կեանք ունիմ. իսկ ձեռագիրներս ներկայ վիճակի մէջ ձգել կիսատ նօթերով, կը նշանակէ պատուել կամ աւելի նիշ՝ այրել: Զեմ ուզեր հետս բան տանիմ, ամէն ինչ կ'ուզեմ հոս թողում: Իսկ գործը գլուխ բերելու համար աշխատանք կը պահանջէ: Բժիշկը օրական մէկ ժամ աշխատելու իրաւունք տուաւ. գրիչ շարժել բնաւ չեմ կրնար. մտածեցի, որ գրագիր մը պէտք ունիմ, աւելի ճիշտ մէշել կու մը, որ օգնէր ինծի. մտքէս առաջին անգամ դուն անցար. նախ, իմ ոճիս լաւ ծանօթ ես, երկար տարիներէ ի վեր միասնաբար աշխատած ենք, ըլլա՛յ գասագիրքերուս, որոնց սրբագրութիւնը արդէն քեզի եմ վստահած, ըլլա՛յ երկերուս տպագրութեանը ատհն եւ մանաւանդ, կրնաս սահուուն, առանց գժուարութեան կարդալ իմ բոլոր տեսակի ձեռագիրներս: Հիմա՝ տղաս, ըսէ՛ տեսնեմ, կ'ուզե՞ս օգնել ինծի, ժամանակ ունի՞ս, միջոցներդ կը ներե՞ն:

Յաջորդ օրուանից, կազմեում ու ձեւի տակ են բերուում՝

Ա. Դպրոցի արտաքին կազմն ու վարչութիւնը,

Բ. Դպրոցի ներքին կեանքն ու դաստիարակութիւնը,

Գ. Դասաւանդման ընդհանուր պահանջները,

որոնք լոյս են տեսնուում յետ մահու՝ յիշուած եօթերորդ հատորի մեջ:

Նոյեմբերի 6ին, երեքշաբթի օր, աշխատանիքի ժամն աւարտուելուց յետոյ, Շանք հարցնուում է Շիրինեանին. «Գրաբար կարդալ կը սիրե՞ս»: Պատասխանը լինում է. «Պր. Շանք, գրաբար կարդալ միշտ հանելի է, սակայն պէտք է շատ ուշադիր հետեւիմ, կարենալ լաւ հասկնալու համար»: Շանք շարունակում է.

¹ Ակոս, թիւ 2-3, Պէյրուք, 1952, էջ 224-225:

Հետոն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Գիշերները փորձեցի ՝”Նարեկ”ը բարձրաձայն կարգամ, չեղաւ. տեսայ որ շատ կը յոգնիմ կարդալէ: Ուզեցի ՚ի խորոց սրտի՛” պոռամ, բայց մտածեցի ՝”արդեօք այս մարդու խենթեցե՞ր է” պիտի ըսեն ու լաւ համարեցի, որ մէկը գար երեկոները եւ ինծի գրաբար ՝”Նարեկ” կարգար: Տղա՛ս, Նարեկացին ու ե՛ս, նոյն մտածումի մարդն ենք եղած: ՝”Նարեկ”-ը մարդկային հոգիի մը խորունկ ալեկոծումն է: (...) Մարդկութիւնը մինչեւ այսօր տակաւին ինքզինքը ճնշուած կ'ըգգայ եւ Աստուած իր ստեղծած մարդոց մասին չէ մտածած: (...) Աստուած մի-միայն ի՛ր մասին է մտածած եւ ՝”Նարեկ”ը մեղադրանք մըն է աստուածային եսականութեան դէմ: Կոիւ մըն է Աստուծոյ հետ. բողո՞ք մըն է, լըմբոստացում մըն է: ՝”Նարեկ”ը թոփչք մըն է դէպի վեր ձգտելու:

Այս գրոյցից յետոյ՝ Շանք «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ ՚ի բարձրաձայն ընթերցումները խնդրում է ուրիշի՝ Գրիգոր Շահինեանին: Մանկավարդութեան եօթերորդ հասորին մաս կազմող, ամբողջովին նոր շարադրուող՝ Ռևուցման նիւթերը Շիրինեանին թելադրելու օրերին, Շանք ամէն երեկոյ «Նարեկ» է ունկնդրում: Դա շարունակւում է մինչեւ՝ Գիտութիւններու ուսուցումը բաժնի թելադրութիւնը աւարտումլուց չորս օր յետոյ:

Վերջին թելադրանիներից է Գեղարուեստներու պատմութիւնը, ուր կարդում ենք.

Գեղարուեստական երկերը կան ու ստեղծուած են հանրային վայելքին համար, բայց վայելել կարողանալու համար նախ պէտք է գիտնալ անոնց գոյութիւնը, պէտք է ճանաչել անոնց արժէքը եւ պէտք է իմանալ անոնցմէ ոգտուելու կերպն ու եղանակը: Բնութեան արւած վայելքներէն ետք գեղարուեստներու արւած վայելքներն են ամենէն բարձրը եւ թանկագինը:²

Նոյեմբերի 15ին Շանք, Շիրինեանի օգնութեամբ, գրութիւնները դասաւորում է երկու ծրարի մէջ: Անձամբ մէկի վրայ գրում է՝ «Հոգեբանութեան առաջին հասոր» եւ ընդգծում է երկու անգամ: Միւսի վրայ պարզապէս նշում է՝ «Հոգեբանութեան երկրորդ հասոր»: Ապա կարգադրութիւններ է անում ենթավերնագրերի, նիւթերը պարզաբնող պատկերների ու գծագրութիւնների վերաբերեալ: Մի երկու օր յետոյ, գրում է նաև իր անունը՝ իբրեւ ստորագրութիւն: Սա լինում է հեղինակի վերջին գրութիւնը:

¹ Նոյնը, էջ 228-229:

² «Գիտութիւններու ուսուցումը», ԼՇԵ, Է. Հատոր, Պէյրութ, 1952, էջ 149:

Լեւոն Շանթ իր գիտակից կեանքի վերջին չորս օրերում, աշակերտների, բարեկամների ու ազգականների հետ խօսում է Աստուծոյ, կրօնների ու բնութեան երաշագօր, վերանորոգուուղ ուժի մասին եւ երբ Գրիգոր Շահինեան սկսում է գրի առնել, անմիշապէս յուշում է.

Պէտք պիտի ունենաք այս բոլորին եղբակացութեան ժամանակ: Ե՛ս արդէն ամէն բան ըստ ու իրար խառնած: (...) Կը դասաւորես ու կը տակես մահէս վերջ: Բայց բաներ կան որ պէտք չէ գրես: Լոէ՛, Հասկցի՛ր, բայց մի՛ գրեր: Պէտք է Հասուննայ մեր ժողովուրդը: Եւ Հասուննայ՝ պիտի, մարդկութիւնը գայ պիտի ըսածներուս: (...) Մեր վարդապետը [Նարեկացին] միս-մինակը ապրած ու Հոգեկան բարձրութեան հասած մարդն է: Ան ճշմարտութիւն մըն է գրեր մինակը, որուն եւրոպան դարեր վերջ հասաւ Renaissanceով: Ամբողջ Renaissanceը ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր Նարեկացիի “ազօթքը”: Ասիկա ցոյց կուտայ Հայկական տաղանդը, եւ թէ մինչեւ ուրտեղերը կրնայ հասնիլ հայը... Նարեկացին Տանթէն բարձր է...¹

Յաջորդ օրը, Նոյեմբերի 20ին, Լեւոն Շանթ ընկեռում է ծանր քմրաժնի մէջ ու լոռում է: Չորեքշաբթի, Նոյեմբերի 28ին, բարեկաման նշաններ է ցոյց տալիս. ճիգ է անում աչերը բանալու, հասկացնելու թէ գիտակցուրիմնը տեղն է: Հինգշաբթի, Նոյեմբերի 29ին, հաշից յետոյ ժամը երեքին, Շանթ յախտենապէս ննջում է: Փափագել էր՝ «Թաղումս կը կատարէ՛ք պարզ, իմ ժողովուրդիս սիրած շարականներն ու աղօքները երգելով»: Նախապէս, իր ամենաշատ ժողովրդականութիւն շահած ու սիրուած, Հաղարամեակ մը մեզմէ առաջ, իին ասութիւն շահած ու սիրուած, Հաղարամեակ մը մեզմէ առաջ, իին ասութիւն տեսիլը կեանքի կոչած բնմախաղի, առաջին արարի երրորդ տեսարանի մէջ, գրել էր. «Եկի ես ի խորս... ի խորս... ծովու... եւ շրջանի... ընկդմեցին զիս...»²:

ԵՍԻ ԹԱՏՐՈՒԾ

Շանթ միշտ նրօրէն, գրեթէ աննկատ, փորձել է հայացնել ու կերտել, հայերէնին ու հայութեան նկարագրին իւրայատուկ, թեմակնն ու բատերական մի լեզու ու մտածողուրիւն: Այստեղ Շանթի պարագային, գիտակից իր մտածելակերպին ու մօտեցման՝ միտումնաւոր խուսափում եմ նշել «ազգային» բառը եւ օգտագործում եմ «հայութեան ու հայերէնին իւրայատուկ» բանաձևը: «Ազգային զգացումը, ինչպէս

¹ Ակոս, թիւ 2-3, Պէյրուր, 1952, էջ 221-222:

² Հին աստուածներ, ԼՇԵ, Գ. Հատոր, Պէյրուր. 1947, էջ 20:

Լեւոն Շանթ եւ իր քատերական մտածողութիւնը

Եւ ազգութեան գաղափարի գնահատումը շա՞տ պղտորուած ու խանգարուած է մեր մտաւոր դասակարգին մէջ վերջին երեսուն-քառասուն տարիներու ընթացքին »¹, գրել է նա: Համոզուած լինելով, որ ժողովուրդների անհատականութիւնը գիտակից կեանքի ու աշխատանքի արդիւնք է, Շանթ յուշել է՝

Համայնական ես-ի զգացումը միշտ կայ ժողովուրդներու մէջ: Բայց այս բոլոր ստեղծագործական աշխատանքի ու արդիւնքի ազգեցութեան տակ ան կը հասուննայ ու կը վերածուի ազգային գիտակցութեան: Ամէնքը կը սկսին փնտոելու իրենց իրար կազող բոլոր հին ու նոր կապերը, կ'ընդգծեն իրենց առաելութիւններն ու առանձնայատկութիւնները եւ գիտակցօրէն կը ձգտին, որ ասկէ ետքը ստեղծեն ու արտազրեն ամէն ինչ իրենց կնիքովը, զրոշ մեն ամէն բանի վրայ իրենց ազգային եար, իրենց ոպին, եւ ամենէն սուրբ բանը կը դառնայ իրենց համար իրենց ազգային անկախութիւնը, իրենց անհատականութեան անկախութիւնը:²

Երբ 1948 թուին, եօրանասունիննրամեայ Լեւոն Շանթ, Ամերիկա է անցնում Բէյրութի Հայ Ճեմարանի համար հանգանակութիւն կատարելու, առաջին անգամ լինելով, համաճանում է խօսել իր կեանքի մասին: Այն գրի է առնում Վարդգևս Ահարոնեանը³: Շանթի «ինքնակենացքութեան» մէջ, կամ մի շաբթ յատկանշական կէտեր: Դրանցից առաջինը, նրա կեցուածքն է իր իսկ ծննդեան թուականի նկատմամբ. «(...) 1869թ (...) Շխտակ է. բայց ես այդ թիւը չեմ սիրել, ես կլոր թիւերը կը սիրեմ. գրէ 1870»:

Շանթ իր կամքով, ակնայայտ պահանջում է փոխել իր ծննդեան թիւը: Փոխուած թիւը նախապէս արձանագրուած է նաև Թրանսիա, 1928 թուի Հռկտեմբեր 31ին նրան արտօնուած, ժամանակաւոր բնակութեան պաշտօնական թերթիկի վրայ: Դա ճիշտ այն օրերին է, երբ Շանթ, «Համազգային»ի հիմնադրումից յետոյ, Եգիպտոսից անցել էր Թրանսիա, այնտեղ գրել էր Օշին Պայլ քատերակը ու Մշակոյրի օրուայ առքիւ՝ Հռկտեմբերի 7ին, ելոյք էր ունեցել Փարփակի «Սալ տը Ժելկրաֆի»ի մէջ ուր շեշտել էր.

¹ «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Բոստոն, Դեկտ. 1922, էջ 13 - 22: Տե՛ս նաև՝ Յունու. 1923, էջ 15-25. Փետ. 1923, էջ 63-80: Վերանայուած՝ ԼՇԵ, Ե. Հասոր, Պէյրութ, 1948, «Ազգութիւնը իյամբ մարդկային ընկերութեան», էջ 7-66, «Գանել խելքի» եւ «Անկախութեան ճգումը գոյութեան հարց է», էջ 206-225:

² «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Յունու. 1923, էջ 18:

³ «Լեւոն Շանթ իր մասին», Հայրենիք Ամսագիր, Փետ. 1960, էջ 3:

Մշակոյթ կը նշանակէ ինչ որ ժողովուրդը իր ձեռքով կը կերտէ: Մշակոյթը մարդկային մտքի ամենաբարձր ու ազնիւ ստեղծագործութիւնն է: Մշակոյթը ուրիշ բան չի նշանակեր եթէ ոչ ժողովրդի ես-ն իսկ: Մշակոյթը տանել կը նշանակէ վերակենդանացնել անցեալը: Այս բոլորը անցեալի կատարումը յաւերժացնելու համար: Հիմք սակայն, յիշելու, պատկերացնելու, գացողներուն համար չէ: Հիմք սակայն, յիշելու, պատկերացնելու, գացողներուն համար է: Մեր ժողովութիւնը մեր մշակոյթը, այդ մեզի համար է: Մեր ժողովութիւնը ստեղծած ես-ը մեր արժէքն իսկ է: Կարեւորը ժամանակի վրայի ունենալ, հոգին է: Ազգ ըլլալ կը նշանակէ մշակոյթը ունենալ: Այն ժողովուրդները որոնք այդ ես-ին գիտակցութիւնն ունենալ: Այն ժողովուրդները որոնք ազգի չունեն ազգ չեն: Մշակոյթի եսն է որ մեզ ազգ կը գարձնէ, մշակոյթ չունեն ազգ չեն: Բոլոր ժողովուրդներու մէջ հիմա թափ է առած այդ ազգ կը չինչ: Բոլոր ժողովուրդները որոնք նըռապայի են մշակոյթի ողին: Ասիական ժողովուրդները որոնք նըռապայի են ենթարկուած, ունին իրենց ես-ը, քանի որ ունին իրենց մշակոյթը: Հայ ժողովուրդը երբ կ'ուզէ իր ազգային պետականութիւնը, ամի-կա մարդկային պահանջ է: Հայ ժողովուրդին այնքան թափած արիւնը մարդկային իտէալի համար է: Եւ մենք, Հայ ժողովուրդը, այդ իտէալին համար աշխատեր ենք, ու կ'աշխատինք:

Այդ օրը՝ խօսմին յաջորդել էր, տառերի գիւտի 1500 ամեակի առքիւ յօրինուած, կոմիտաս Վարդապետի «Ով մհծառքանչ դու լեզու» երգը, հառամայն երգչախմբի կատարմամբ¹:

Անհատական եւ հաւաքական եսի հանրեպ, Շանթի ըմբոնումը յատուկ շեշտ ու նշանակութիւն է ստանում, երբ արդէն երատարակուած ու թիմ բարձրացած բեմախաղերի մէջ, նկատում ենի նոր երատարակութիւնների համար, նրա կատարած փոփոխութիւնները: Թատերական թիմերի բնորոշումների, ենդի նակութեան տարի ների ու դրանց բնակրերի մէջ հեղինակի բերած փոփոխութիւնները արժանի են յատուկ ուշադրութեան: Կարեւոր է շեշտիլ, որ այս փաստը, մեր բանասէրների մօտ անենկատ է մնացել ու այդ մասին աշխատանք չի տարուել²:

Մենի այժմ նախ կ'անդրադանանք բեմախաղերի անուններին, նշելով դրանց գրութեան տեղը, տարին, առաջին տպագրութիւնը եւ ապա կը իշենի փոփոխութիւնների ենթարկուածը:

¹ «Մշակոյթի օրը Փարիզի մէջ», Յառաջ Հոկտ. 11, 1928, Փարիզ: «Ով մհծառքանչ դու լեզու» երգը, «Թատերաբանախօսութեան» ժամանակ հնչեց Երևանի կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի կամերային երգչախմբի կատարմամբ:

² Կատարուած փոփոխութիւնների մասին, միայն նշուել է տողերիս հեղինակի կատարած, Շանթի երկերի բնմադրութիւնների օրերին՝ թեհրան (1973), Երեւան (1991 ու 1996) եւ Փարիզ (1988, 1997 եւ 1998):

Լեռոն Շանք եւ իր քատերական մտածողութիւնը

Եսի Մարդը (գր. Ելրոպա 1901. տպ. Սան-Պետերզբուրգ 1904. փոխ. Պէյրութ 1946)

Ուրիշ Համար (գր. Անտվերպ 1901. տպ. Թիֆլիս 1905. փոխ. Թիֆլիս 1914)

Ճամբուն Վրայ (Նախ անուանուել է՝ Սրտի Մարդիկ) (գր. Ելրոպա եւ Թիֆլիս 1901-4. տպ. Մոսկվա 1910. փոխ. Կ. Պոլիս 1914)

Հին աստուածներ (գր. Երեւան 1909. տպ. Կ. Պոլիս 1913. փոխ. Թիֆլիս 1913, Պէյրութ 1947)

Կայսր (գր. Լոգան 1914. տպ. Թիֆլիս 1916. փոխ. 1923 եւ տպ. Գահիիրէ 1926)

Շղթայւածը (գր. Լոգան 1918. տպ. 1921. փոխ. Պէյրութ 1947)

Ինկած Բերդի հշխանուհին (գր. Թեհրան 1921. տպ. Բոստոն 1923)

Օչին Պայլ (գր. Փարիզ 1928. տպ. Բոստոն 1932)

Ժողովուրդի թշնամին (Քարգմ. Պէյրութ 1948. տպ. Պէյրութ 1968)

Ընդամենը իննը անուն ընդգրկող ցանկի մէջ, ուրը ինձնուրոյն գրութիւններ են, իսկ մէկը՝ վերջինը, արդէն յշշուած իրսէնի երկն է: Հայերէնի փոխադրելու համար, Շանք այն ենթարկել է փոփոխութիւնների: Կրնատել է որոշ գործող անձեր. խտացրել ու զուսպ կառոյց է տուել փոխասացութիւններին. վերամշակել է մի քանի մաս: Դրանց բերումով, քատերակի փոխասացութիւնների ոճը աւելի շուտ յիշեցնում է երա առաջին երեք բևմախաղերի արտայայտչաձեւերը, քան իրսէնին իւրայատուկ շարադրաները:

ՆԵՐՄՈՒԾՈՒԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ (Նմոյշներ)

Ա. - ԵՍԻ ՄԱՐԴԸ

Առաջին տպագրութեան մէջ բնորոշուած է՝ Դրամա հինգ արարով: Ունի Անձեր վերնագրուած մի ցանկ, ուր տասնեւերեք տիպարների համար բացատրութիւններ կան: Դրաման ստորագրուած է Լ. Շանք, 1901, Թիֆլիս: Արարների եւ տեսարանների նշումների համար կիրառուած ձեւը երկրորդ՝ 1946ի երատարակութեան մէջ փոխուած է: Եսի Մարդը այլեւս «Դրամա» չէ, «Թատերակ» է: Անձերի ցանկից հանուած է մէկ տիպար՝ Շառայ մը. բացատրութիւնների մէջ երբին փոփոխութիւններ են մտցրուել: Թատերակի մէջ որոշ բառերի ու դարձուածքների փոփոխութիւնից զատ, կան բազմաթիւ կրնատում-

Արքի Յովհաննիստան

ներ¹: Վերաշարադրուած է մի քանի հասուած: Օրինակ՝ չորրորդ արարի մէջ, Մուշեղի եւ Սեղբակի հանդիպման տեսարանը², հինգերարդ արարի Այրիի ու Արաքսիի բաժնենը³ եւ այլն: Դրանք բոլորն եւ, խաղի ներքին կառոյցին միան գամայն տարրեր շեշտ ու երանգաւորում են տուել ու միշտ չէ որ բատերայնօրէն աւելի յաջողուած են:

¹ Հանուած են -

Ա. օրինակ՝

(Ա. արար, Վերջին տեսարան)

«Սեղբակը կը նետոի բազկարոոի մէջ:

ԱԶՆԻԻ - մօտենալով քննուշ ու զգուշ: Աւարտեցի՞ր գործդ, Սեղբա՛կ:

ՍԵԴՐԱԿ - Գո՞րծըս... Այս՛. վերջացա՛ւ, ալ վերջացա՛ւ:

ԱԶՆԻԻ - Այդպէս նեղացա՞ծ. դա ի՞նչ գործ էր. ի՞նչ ըրիր որ:

ՍԵԴՐԱԿ - նախ շեշտակի կը նայի քրոշը, վերջը կը բարկանա նստած տեղէն ու հանդիսանք շեշտով մը ձեռքը սեղամին զարմենով: Պարտքս. պարտաւորութի՛ւնս. ուրիշ ոչի՞նչ:»

(«Բանրեր», Բ. Գիրք, 1904, Սան-Պետերզրուրգ, էջ 12):

Բ. օրինակ՝

(Չորրորդ արար, Ա. տեսարան, Երկրորդ մաս)

«ՄՈՒՇԵՂ - ծանր ծանր կաշկանդումէն կ'ազատուի ու կարծես ինքն իրեն: Այդպէս ուրեմն վճռեր են որ ես լրտես մըն եմ: Լա՛ւ: Մինչեւ հիմա մատնիչ մըն էի, հիմա ալ լրտես մը: Լա՛ւ:

ԱԲՐԱՀԱՄ - Ատ ո՞վ: Բայց յանցանքը քուկդ է: Քանի անդամ ըսեր եա քեզի, որ քիչ մը զգուշ ըլլաս. Ի՞նչ հարկ կա այդպէս ազատ ու աշկարա փաշային մօտը կ'երթաս ու կու գաս:

ՄՈՒՇԵՂ - ինք: Հապա ի՞նչպէս. գնամ գողի՞՞ պէս:

ԱԲՐԱՀԱՄ - Ամենեւին որ չերթաս, իհարկէ՛, ամենէն աղէկ, բայց որ կարելի չէ՛: Քանի որ շարունակ կը հարցնէ որ շուտ շուտ հանդիպիս, քանի որ օձիկդ չի թողներ: Գոնէ այնպէս ըրէ՛ որ շատ չի նկատուի:

ՄՈՒՇԵՂ - ինչու՞ ամբարտաւան. ես հասարակութեան կարծիքը հարցնելու սովորութիւն չե՛մ ունեցեր, ո՞չ ալ անոր բարեհաճ թոյլտութիւնը խնդրելու իմ ըրածիս ու թողածիս համար: Ես գիտե՛մ իմ գործս, ու իմ գատաւորս ես ի՞նքս եմ:»

(«Բանրեր», Բ. Գիրք, 1904, Սան-Պետերզրուրգ, էջ 31):

² Նոյնը. էջ 34-37. ԼՇԵ, Բ. Հատոր, Պեյրուր, 1946, էջ 278-280:

³ Նոյնը. էջ 39-40. ԼՇԵ, Բ. Հատոր, էջ 284-285:

Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

Բ. - ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ

Առաջին տպագրուած օրինակը բնորոշուած է Դրամա Յ արարով¹: Ունի Անձերը նշող ցանկ: Յիշուած է նաև կատարուալ դէպֆերի Տեղը, առանց որոշ բաղաքի կամ երկրի նշումի: Դրաման ստորագրուած է Լեւոն Շանթ: Երկրորդ հրատարակութեան մէջ², տարբեր է անձերը ներկայացնալ ցանկի բացատրութիւնների գրութիւնը: Տիպարներից մէկի, Արքին աղայի անունը փոխուած է Գաղուստի: Տեղը նշուած է «Հայաշատ բաղաք մը»: Այս տպագրութեան մէջ եւս արարների եւ տեսարանների բաժանումը տարբեր ձեւի մէջ է դրուած: Կան ուրիշ կարեւոր փոփոխութիւններ³:

1946ի հրատարակութեան մէջ, Ուրիշի Համարը «Դրամա» չէ այլ՝ «Թատերակ»: Ունի «Անձեր»ի ցուցակ՝ առանց ը որոշիչի: Սեղմուած է նաև Տեղը բնորոշող բացատրութիւնը: Զկայ «Հայաշատ բաղաք մը» նշումը. ինչպէս նաև Թիֆլիսի հրատարակութիւնների մասին որեւէ յիշեցում: Վերաշարադրուած մասերից կարեւոր են, յատկապէս երրորդ արարի մէջ՝ Սիրանի, Օհաննեսի ու Սիրանի, Տիբուեու հանդիպման տեսարանները⁴: Եսի Մարդը դրամայի պէս, այստեղ եւս, վերջին մշակումները առանձնապէս նպաստաւոր չեն:

Գ. - ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Առաջին հրատարակութեան մէջ բեմախաղը չի բնորոշուել⁵: Զունի ոչ արարների թիւ, ոչ Անձերի եւ ոչ էլ Տեղի նշում: Յիշուած չէ նաև

¹ Մուլք Ամսագիր, թիւ 11-12 (1905), Թիֆլիս, էջ 42-66 եւ թիւ 1 (1906), էջ 14-25:

² Ուրիշի Համար, 1914, Թիֆլիս:

³ Կրնատուած է օրինակ՝

(Երրորդ արար, Ա. տեսարան երկրորդ մաս)

«ՄԱՐԻԱՄ - (...) Բայց քանի դեռ կամ, քու բարի ձեռքդ վրայէս անպակաս ըրէ՛, Սիրան: Այ այս երկու օրը ալ ձանձրացեր ես, ինչ է, քիչ մը որ ուշ չես դարձներ, ո՞չ զեղս կայ, ո՞չ ժամանակս կը նային, ո՞չ հոգ ընող կայ. բոլորովին ծովը նետելու բան եմ դարձեր:

ՍիրԱՆ - (Նիոր) ես ... ես ...

ՄԱՐԻԱՄ - Հոգուդ գարձ է, Սիրան:

ՍիրԱՆ - (Անշարժ, գլուխը կախ, աչքերը կետի մը:)

(«Մուլք» Ամս., թիւ 1, 1906. Թիֆլիս. էջ 15):

⁴ Նոյնը, էջ 21-25: ԼՇԵ, Բ. Հասոր, էջ 331- 335:

⁵ Գարուն Ալմանախ 1 (1910), Մոսկուա, էջ 51- 104:

գրութեան տեղը: Պարզապէս ստորագրուած է Լեւոն Շանք: Երկրորդ հրատարակութիւնը (Կ. Պոլիս, 1914) վերնագրի մէջ ունի «մ» փոխարէն՝ «ն» տառադարձութիւնը (Ճամբուն վրայ), Տրամա Հինգ արարով ենթավերնագիրը, «Գրուած է՝ 1904 Նոյեմբերին Թիֆլիս» նշումը, Մի ժամկ արեւելահայերէն բառերի արեւմտահայերէն տարրերակը եւ չանի արեւելահայերէն բառերի արեւմտահայերէն տարրերակը եւ չանի արարի, իինցերորդ մասի հետեւեալ խօսերի կրնատումը. չոր րորդ արարի, իինցերորդ մասի հետեւեալ խօսերի կրնատումը. «Կատաղել է պէտք. կատաղի կոի՛ւ ու անյոյս, դիմադրութիւն. պէտք է մեր գեներուն նայըրը, որ մերոն արքըննան, պէտք է մահ, մահ գէներուն գեներուն նայըրը: Մարդոց բարձրացնողը կենդանի օրինակն է, մարդոց իր ետեւէն բաշողը անձնուիրութիւնն է: Մինչեւ սպանել չի սորվինք, մինչեւ այրել, վառել չի սորվինք, մինչեւ մենք մեզի պաշտպանել չի սորվինք, չի կա՛յ այդ ցաւերուն թերեւացումը: Մինչեւ մենքիլ չի սորվինք, չի կա՛յ այդ ցաւերուն թերեւացումը: Հիմա կը հասկա՞նա, թէ ես ի՞նչ չու...»¹:

Դ. - ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Առաջին տպագրութեան մէջ «Տրամա» է. ունի փակագծի մէջ Հազարամեակ մը մեզմէ առաջ ենթավերնագիր բայց ոչ արարմերի բուի մինչեւ այրել, վառել չի սորվինք, մինչեւ մենք մեզի պաշտպանել չի սորվինք, չի կա՛յ այդ ցաւերուն թերեւացումը: Այս մօտեցումը հեղինակը պահանջերի ցանկ եւ տեղի բնորոշումը: Այս մօտեցումը հեղինակը պահանջել է իր ապագայ բոլոր թեմախաղերի մէջ: Բնականարար ընթերպանել է իր ապագայ բոլոր թեմախաղերի մէջ: Բնականարար ընթերպանումը գիտողի նման, միայն արարման՝ կարդալու ընթացքին է, որ կարող է աստիճանաբար ծանօթուել ու նանաշնչ գործող անձանց: Շանք կեանիք վերջին տարիներում շնչել է «Տրամա»ն ու վերահրատարակութեան համար օգտագործել է Յովհաննիս Խան Մասէկեանին ծօնած օրինակի մէջ իր ձեռքով մտցրած ուղղումները²:

Ե. - ԿԱՑՄՐ

Շանքի բատերա-քաղաքական մտածողութեան բնագաւառում ուշագրաւելու երեւոյք է: Այս գրութեան մէջ է, որ հեղինակը փորձում է իր անձնական ու կուսակցական, արևելեան ու արեւմտեան գաղափար-

¹ Նոյնը, էջ 87-88: Ճամբուն վրայ, Կ. Պոլիս, 1914, էջ 1, 71 եւ 50:

² Հին աստուածներ, Կ. Պոլիս, 1913: Տե՛ս նաև Հին աստուածներ, Թիֆլիս, 1913, թ. Խ. Մասէկեանին ծօնուած օրինակը՝ Նուպարեան Գրադարան, Փարիզ: ԼՇե, Գ. Հասոր, Պէյրուք, 1947:

Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

Անդրի միջեւ հանդիպման եզրեր գտնել: Բեմախաղի առաջին տարագրութիւնը վերնագրուած է՝ ԿԱՅՍՐ, Դրամա Բիւզանդական դարերէն¹: Դրամայի արաբների թիւը նախավէս նշուած չէ, սակայն կայ գրութեան աեղն ու ժամանակը՝ «Լոգան 1914 Մարտ»:

Հրատարակութիւնից իննը տարի յետոյ, Ամերիկայի Միացեալ Նահանգներում, նորահիմն Հայրենիք ամսագրի մէջ, Շանթ հրատարակում է «Կայսր» խաղի նախարանը, խմբագրութեան հետեւեալ բացատրութեամբ. «Մեր տաղանդաւոր գրող Լեւոն Շանթի «Կայսր» խաղը, ինչպէս յայտնի է, առաջին անգամ լոյս տեսաւ Թիֆլիս 1916 թ.: Բեմադրական նկատառումներով այն տաեն հեղինակը դուրս էր թողուցած այդ խաղին նախարանը, որ մինչեւ այսօր մնացած էր անտիպ: Այդ անարդ կտորն է որ կը ներկայացնենք այժմ մեր ընթերցողներուն»: Այստեղ աւարտում է, մեկնարանութեան ու պատմականօրէն ժննութեան կարօն, նշուած նախարանի նախարանը, որին պիտի անդրադառնանք ֆիշ յետոյ: Այժմ անցնենք Շանթի «դուրս թողուած» նիւթի սկզբնատողերին.

ՏԵՍԱՐԱՆԸ

Բիւզանդական Բանակատեղի
Հրամանատարի վրանին տակ
(...)²

Յատկանշական է «Նախարան»ի հրատարակութեան տարին՝ 1923: Պատմական ու ժաղաքական առումով, Հայաստանի համար խիստ նշանակալից ժամանակաշրջան: «Նախարան»ը Հայրենիք ամսագրի մէջ հրատարակուած անդրանիկ բնականացն է: Կարեւոր է նկատել, որ թէ՛ Շանթի վերնագրի եւ թէ՛ խմբագրութեան տողերի մէջ, յիշուած չեն ոչ Դրամա եւ ոչ էլ Թատերակ բնարոշումները: Այնտեղ կայ միայն Խաղ բառը. մի բառ ու բնորոշում, որ եզակի մնաց Շանթի ամբողջ թատերական գրականութեան մէջ: Հեղինակը այն վերապահեց, ու իր երկերի շարքում գերիրական երեւոյքներ թեմ հանող՝ Շղթայւածը «Խաղ»ի մենաշնորհը դարձրեց:

Յիշելով վերը նշուած, ժամանական բուերի ժաղաքական իրադարձութիւնները, «Նախարան»ը ուշադրութեամբ զննելու դեպքում, պիտի

¹ Կայսր, Թիֆլիս, 1916:

² Հայրենիք Ամսագիր, Մարտ 1923, Բոստոն, էջ 4-11:

Եկատենիք որ այնտեղ կիրառուած փոխասցութիւնների ներքին լիցբը, տարրերուում է Կայսրի չորս արարների մեջ դրսեւորուած ընթացքից ու զարկից: Այս քաժնի մեջ, բովանդակութեան ու շարադրման ոնք, նման է հեղինակի բանական բուերի սկզբին գրուած, վիպապաշտական հնկած բերդի իշխանուցին քատերակին: Այնտեղ կայ վերջինի ներքին միջն ուժը, ոգին ու շունչը: Մեծ հաւանականութեամբ «Նախարան»ը գրուել է Հայաստանի Հանրապետութեան խորտակումից յետոյ (Տե՛ս վարը, ծանօթ. 70):

Կայսրի երկրորդ հրատարակութեան մեջ, Դրաման դարձել է Թատերակ ու առանց որեւէ բացարութեան, «Նախընթաց արար» վերնագրի տակ, ներառուած է «Նախարան»ը¹: Դրամահի առաջին արարի, Ա. տեսարանի մեջ, չոգեւորականը փոխարինուել է նախ՝ Իր Սուրբը (Կայսրի) եւ ապա Սուրբը գործող անձով²: Փոխուած են նաև որոշ բառեր: Շանրի վերջին խմբագրութիւնը՝ Պէյրութ 1947ին, Թիֆլիսի ու Գանձիկի հրատարակութիւնները նշելով հանդերձ, դրանց տարրերութիւնների մասին որեւէ բացարութիւն չունի:

Զ. - ՇՂԹԱՅԻԱԾԸ

Անդրանիկ տպագրութիւնը, փակագ ծերի մեջ ունի Խաղ մեր միջնադարէն ենթավերնագիրը: Կայ նաև, «Գրուած է՝ 1918 թի ամառ, Լոգան» նշումը: Գիրքը տպագրուած է Թեհրան, սակայն բուականը, որ 1921ն է, չէ յիշուած: Հեղինակի խմբագրած հասորի մեջ (1947 Պէյրութ), հանուած է ենթավերնագիրի փակագիծը եւ վերականգ նուած է վերնագրի միջի «Ո»ն՝ ՇՂԹԱՅՈՒԱԾԸ: Խաղի բնագրի՝ յատկապէս թգուկների երգերի մեջ, փոխուած են մի քանի տաղեր ու բառեր: Կան նաև թերեւ յաւելումներ. օրինակ՝ Էմիրի փախուսոր պատկերող, երկրորդ արարի Ա. տեսարանում: Երրորդ արարի Գ. տեսարանի մեջ, Հարճի խօսերից հանուած է՝ «բռնակալութեան, բռնարարութեան, մեր ստորացման, մեր ստըրկացման բոլոր վրէծը»³:

¹ Կայսր, Գահիրէ, 1926, էջ 1-21:

² Կայսր, Թիֆլիս, 1916, էջ 13-16: Կայսր, Գահիրէ, 1926, էջ 31-34:

³ Շղթայւածը, Թեհրան, 1921, էջ 82: Փարիզ՝ նուպարեան Գրադարանում պահպանում է Խաղից մեկ օրինակ, հեղինակի հետեւեալ ձօնագրութեամբ.

Տիկին Զապէլ Եսայեանին.

Յարգելի՝ տիկին, թողէք որ ձեր “Աքսորեալ Հոգին” փոխարինեմ իւ Շղթայեալ ոգիովը”:

Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

Է. - Վերջին երեք...

Վերջին երեք բատերակները, բնորոշումների ու ենթավերնագրերի առումով, կարեւոր փոփոխութիւնների չեն ենթակուել: 1947 եւ 1948 բուերին խմբագրուած հասորները, գրեթէ նոյնութեամբ կրկնում են Հայրենիք ամսագրի մէջ տպագրուած՝ Ինկած բերդի իշխանուհին¹ եւ Օշին Պայլը²: Երբեմն կան ուղղագրական ու կետադրական պրագրութիւններ: Յետ մահու՝ 1968ին «Համազային Թատերական Շանթի բարգմանութեամբ ժամանակագրութեամբ» ամբողջովին հեղինակի բնագրին հաւատարիմ համարել: «Մարդկային եղին լարողն ու քաշողը բանի մը հասած ըլլալը չէ, այլ բանի մը հասնելու ձգումը», գրել է նա:³:

ԵՐՐԵԱԿ ԽՄԲԱՀՈՐՈՒՄ

Շանթի իննը բեմախաղերը, գրութիւնների բովանդակութեան, կառոյցի ու գրական ոնի առումով, կարելի է խմբաւորել, միմեանց յաջորդող, երեք երրեակների մէջ:

Առաջին երրեակը՝ *Եսի Մարդը*, Ռոդիչի Համար եւ Ճամբուն վրայ, իբրեւ նիւթ ունի ԺԹ. դարու վերջի եւ Ե. դարու սկզբի, հեղինակին ժամանակակից կեանքը՝ իր ժաղամա-հասարակական կառոյցով, գործող անձերով ու դէպֆերով:

Երկրորդ երրեակը՝ Հին աստուածներ, Կայսր ու Շղթայւածը, սկզբ է առնում «մեզ մէ հազարամեակ մը առաջ» տեղի ունեցած դէպֆերի բեմական արարումները ներկայացնող դրամավ եւ աւարտում է միշնադարնան խաղով: Այս շարժի պատում ները, իբրեւ առանցք ունեն Թ.-ԺԱ. դարերի պատմական որոշ դէպֆեր, որոնց մէջ Շանթ, իր ժամանակակից կեանքի իրադէպերի հետ նարտար գուգահեռներ է հիւսել: Երեք բեմախաղերի մէջ էլ, գործող անձերի շարքում, ներ առուած են գերիբական ու գերբնական երեւոյքներ՝ տեսլիք, Զայն ու ճայներ, բնութեան տարերք եւ բանասեղ ծական ուրիշ միջոցառում ներ: Տեսարանները պարունակում են լեռ, դաշտ, կղզի, տանար, վանք, պալատ, բերդ ու մայրամալաք:

¹ Հայրենիք Ամս. Յունիս-Սեպտ. 1923:

² Հայրենիք Ամս. Մայիս-Յուլիս 1932:

³ ԼՇԵ, Թ. Հատոր, Պէյրութ, 1946, էջ 301:

Երրորդ երրեակը՝ ինկած Բերդի հշխանուհին, Օշին Պայլ եւ Ժողովուրդի թշնամին, նախ, վիճապաշտ ոգով գրուած առաջին երկու քառականում, շօշափում է ԺԲ.-ԺԴ. դարերի հայոց պատմութեանն առընչուղ դէպֆերը եւ ապա, քարդմանչա-ստեղծագործական ուղով, շաղկապւում ու միաւոր է կազմում, ԺԹ. դարի Եւրոպայի հիւսիսային երկիրների, իդեալապաշտ ու հասարակական վեհ խնդիրներ արձարծող, գրական հոսանքների հետ:

Ինկած թերդի հշիանուհին ու Օչին Պատերակները, իրենց ոնով, կառոյցով ու փոխասացութիւններով, աւելի մօս են գերմանական վիպապաշտմերի՝ Լեսինգի, Գեորգի ու Շիլլերի բեմական գրականութեան ոնին ու կառոյցին, այսինքն Ժ. - Ժ. դարու գրականութեանը ժամ' Շանթի միւս բոլոր վեց երկերի մէջ ծիր արձակած, Ժ. Ե. Դարի Շանթի սիրած հեղինակների՝ Իրսենի, Հառլապոմանի, Մետերլինգի եւ Թակորի բատերական մտածողութեանը, գրականութեանը եւ թեմադրութիւնների ոմերին: Այս երթեակի առաջին երկու բատերակ-ների մէջ, պատմականի նամբով, Ի. դարու բաղաբական հայ շարժումների հետ ներքին զուգահեռ կազմելու միտումով, ներ առուած է Կիլիկիայի հայ պետականութեան հաստատման նախնական օրենքը եւ ասպա նրա վերջին՝ անկման շրջանը: Ժողովուրդի թշնամին իր իդեալապաշտ՝ յաղթանակը պարտութեան մէջ արժեւորող, եսակենորոն գործող անձի միջոցով, գալիս է Շանթի վերջին երթեակը լրացնելու եւ այն կրկին կապելու ու օղակելու առաջին երթեակի հետ, ուր մենք մեզ կրկին գտնում ենք հերինակի ապրած տարիների ու կեանքի հոյովոյերներում:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴՐԱՄԱՆԵՐԸ...

Շանքի բեմախաղերի գրութիւնը սկսուել է արտասահմանում՝ Բել-
Ղիայի Անտվերպ քաղաքում, 1901 թուի նոյեմբերին։ Պատմական
փաստերը, Շանքի կողմից Յովիհան նեկա Թումանեանին ուղղուած
համակներն ու բացիկներն են։ Շանքի հրատարակուած առաջին դրա-
ման՝ Եսի Մարզը նոյնպէս, լրյս է տեսել արտասահմանում՝ Սան-Պե-
տերք քուրզ, Նիկողայոս Ադոնցի խմբագրած «Բանքեր Գրականու-
թեան եւ Արուեստի» մէջ, 1904 թուին։ Այս դրաման միշտ համարուել
է հեղինակի առաջին քատերական գրութիւնը։ Սակայն Թումանեանին
ուղղուած բացիկներից մէկը հաստատում է, որ Շանքի առաջին դրա-

¹ Երեւան, ԳԱԹ. Յովհաննես Մումանեանի փոնդ:

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

ման Ուրիշի Համարն է¹: Երկու դրամաներն էլ բարձր նաշակով, զուսպ պարզութեամբ ու բժախնդրութեամբ, կրկնում են այդ օրերին Եւրոպական գրականութեան մէջ կիրառուող, արդիական նիւթեր շօշափող, բատերագրութեան ձեւերն ու կառոյցները:

Թէ ինչու հեղինակը ապագային փոխել է այդ երկու երկերի գրութեան տեղը եւ առեղծման տարեթուերը ու դրանց տարբեր հերթականութեամբ է հրատարակել, մնում է առեղծուած: Ըստ պահպանուած Թումանեանին ուղղուած նամակների հաստատ է, որ երեք շարունակական տարիներ՝ 1901-1904 թուերին, Շանք միաժամանակ աշխատել է իր առաջին երեք թեմախաղերի վրայ: Թերեւս հեղինակին նախ գոհացում է պատճառել, գաղափարական կոհիւը ներկայացնող, անհատական ու հաւաքական եաը բաղանական ու յեղափոխական առումով շօշափող թեմախաղը: Դեռ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը չմտած գրողը, բաղաքական, կուսակցական որեւէ կաշկանդում չունենալով, հրատարակութեան առաջնութիւնը տուել է Եսի Մարգը դրամային: «Գիտակցութեան եկած օրէս կապուած էի, ամ շուշտ, մեր յեղափոխական շարժումներուն, դեռ Գեորգեան ձեմարանէն: Իմ բոլոր ընկերներս, ծանօթներս, իմ մօտիկ մարդիկները այդ շարժման մէջն էին, եւ ես մօտիկն ծանօթ էի ներսի, դուրսի բոլոր կատարուածներուն: Բայց ինքս գիտակցաբար մէջը չէի մտած: Ես իմ վրայ նայած եմ միշտ իրեւ գրչի մարդու եւ յեղափոխութիւնը նկառած եմ միշտ իրեւ գէնքի գործ, ես այդ գէնքը չեմ գործածեր, պէտք չէ որ մտնեմ գէնքով բաղողներու մէջ »²:

Շանք «գործօն» կուսակցական է դառնում 1907 թուին, երբ իր առաջին երրեակից արդէն հրատարակուել էին երկուսը՝ Եսի Մարգը և Ուրիշի Համարը ու թեմ էին բարձրացել նախ՝ Ճամբուն վրայն ու ապա Եսի Մարգը: Եսը թեմի վրայ հատարական խնդիր դարձրած հեղինակը, այդ թուին արդէն իր բատերական մտածողութեան համար, ստեղծել էր այն գործօն կենդրոնացուած մքնոլորտը, որի մասին պիտի խորիէր, մտահոգուէր ու զբաղուէր մինչեւ խոր ծերութիւն՝ շուրջ հառասունեօր տարի: Նկատի ունենալով, որ առաջին երրեակի բոլոր գրութիւններն էլ, հրատարակուելուց առաջ սրբագրուել են Թիֆլիս ու դրանց սկզբնական ընթերցումները, տեղի են ունեցել Թումանեանի

¹ Անտվերպ/Թիֆլիս, Շանքի Յ. Թումանեանին ուղղուած բացիկը, 1901 Նոյեմբեր 11: Բովանդակութիւնը տես հետագայ՝ “Ե՞րբ է ծնուել բատերակ բնորոշումը” բաժնի մէջ:

² «Լեռն Շանք իր մասին», Հայրենիք Ամսագիր, Ապրիլ, 1960, էջ 25:

մօտ, «Վերնատան» մէջ, Շանթ իր խմբագրութեամբ, Պէյրութ հրատարակուող հատորների մէջ, Թրիֆլիսը համարել է դրանց «գրութեան» տեղը:

ՀԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՂ

Շանթի բատերական մտածողութեան մէջ բանում է հեղինակի հետեւալ միտքը. «Ամէն բան, որ ընթացիկէն ու առօրեայէն կը շեղի՝ իր հետքը անակընկան մը կը քերէ, ցնցում մը կու տայ մեզի, այսինքն նոր յուզական տարր մը կ'աւելցնէ»¹: Նշուած հակադրութիւնը Շանթի առաջին դրամայի յուզական աշխարհի կերտման մէջ մեծ դեր ունի:

Հեղինակը իր երկերի պարբնառուման ու գրութեան մասին, առւել է հետեւալ բացատրութիւնը. «Առաջ իմ մէջ կը ծագի գրուածքի անունը, յետոյ կը ձեւաւորուին գործող անձինք եւ անունները, վերջը բովանդակութիւնը»²: Եսի Մարդը դրամայի առաջին տպագրութեան նկատմամբ ուշադիր լինելու դէպքում, պիտի նկատենք, որ եսը ձեւաւորուած է աւելի մեծ քան միւս տառերը: Առաջին հերթին, տասնիններորդ դարու հոգեբանական դպրոցների հանաչած, անձնասիրական եար՝ ցոօն յիշեցնող այդ բառը, գործողութիւնների, յատկապէս դրամայի վերջին արարի ընթացքում, հոգեբանօրէն չպիտի բանի ու իմաստաւորուի քանի որ հեղինակի խօսքը էալիս այդ եսից ծնունդ առած իրավիճակի, այսինքն եսամոլութեան, անձնասիրութեան մասին չէ: Շանթ եսը միշտ օգտագործել է ըստ Սուրբ Գրոց աւանդութեան՝ իբրև գիտակցականին կցուած բարձրագոյն դրութիւն, իմացութեան ու իմաստի ակունք: Հեղինակը համոզուած է՝ «Զգացական աշխարհի փոքրիկները աւելի կոյր կոխներ են, աւելի քառսային ու տաքերային, ատով ալ աւելի լայն շրջանակներու վրայ անմիշապէս ազդող: Մտքի ու գիտակից կամքի միշամտութիւնը Աստուծու ձայնն է այդ քառսին մէջ. կարգի, կանոնի արթնցող պահանջը. գալիք նոր ապագաներուն, ըլլալիք ու մեզի դեռ անծանօթ աշխարհներու առաջին հաստումն ու հաստատումը»³:

¹* Հայերէնի բառակազմութիւնը եւ յուզական գէնքերը լեզուի - իբրև լրացում քերականութեան, ԼՇԵ, Ը. հատոր, Պէյրութ, 1950, էջ 110:

² «Լեւոն Շանթ իր մասին», Հայրէնիք Ամսագիր, Փետ.-Մայիս 1960:

³ «Բանահիւսական հարտարապետութիւն», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 399:

Լեռոն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Համաձայն հեղինակի մեկնարանութեան ու լմրոնումին, հաւաքական կեանքի մէջ ինքնանանաշումի, անհատականութեան հասած մարդն է միայն, որ կարող է գիտակցել եաը: Այն բնութեան՝ արարչութեան ակունքին կցուելու, արարող գիտակցութեան հետ հաղորդակցուելու ճամբան է: Արեւելեան խորագիտական (gnostic) դպրոցներից ժառանգած իմաստն է որ բանում է Շանքի մօս:

Քրիստոնեայ Հոգեբանութեան համար եզակին ինքը Աստուածն է միայն. (...) անհատը քրիստոնեայի Հոգեբանութեան մէջ միշտ ձուլուած է հանրութեան. իբրև անհատ մէջտեղ չի գար. իբրև անհատ չի խօսիր Աստուածու հետ երգերու ու շարականներու մէջ. եթէ խօսի՝ քրիստոնէական ըմբռնումներուն ու քրիստոնէական պատշաճութեան գէմ գացած կ'ըլլայ, քալած կ'ըլլայ Հեթանոսական ուղիներով: Եւ Գրիգոր Նարեկացին այդ հեթանոս ճամբով կը քալէ. իր "աղօթքներ"ուն մէջ կեցած է միշտ ինքը մինակ, իբրև անձ, իբրև անհատ մարդ մը, ու կը խօսի Քրիստոսի հետ, իբրև եւ, ի՞ր մասին, ի՞ր հոգիի մասին, ուրիշներուն հետ գործ չունի:

Հետեւանքը կ'ըլլայ Հոգեբանական խորութիւն. գրուածքը ընդհանուր խօսքեր ու գաւանանք ըլլալէն կը գառնայ Հոգեբանական, անհատական ապրում:

Ըստ այս մտածողութեան, եսի Մարդը բեմախաղի գործող անձ՝ նախկին կրւսակցական եւ այժմ՝ կուսակցական հաւաքական մտածողութեան սահմանումներում մատնիչ ու լրտես համարուող Մուշեղ Տերենանը՝ եսի մարդը, հանրային հաւաքական հոգեքան նութեանը հակառակ, իր կամքի տէր՝ մենակ քայլող անձն է: Իր սրաի ճայնի արձագանքը չլսած, իր անհատականութիւնը կերտած մարդն է նա: Զգացական եւ իմացական, անշատ բանող, աշխարհների միջեւ ինկած մարդու դրաման է սա: Այս դրութիւնը գործօն է Շանքի բեմախաղերի բոլոր հիմնական գործող անձանց մօս: Նա իր մտածողութիւնը լուսաբանելու համար, կեանքի վերջին տարիներում շարադրել է.

Քրիստոնէութիւնը, ինչպէս եւ ընդհանրապէս ամեն արդէն կազմակերպուած կուսակցութիւն, չըսկեր անհատականը, կը սկրիչ ընդհանրականը. կը խօսի ընդհանրութեան անունով, իբրև կուսակցութեան բերանը. նոյնիսկ շատ ուժեղ կուսակցական դէմքեր, որ իրենց խելքով կուսակցութիւնը կը գարեն ու իրենց կամքը կը պարտագրեն, ամեն կերպ կը ջանան անհատականը սքօղելու եւ իբրև հանրութեան բերանը ներկայանալու, իբրև հանրութեան կամքին արտայայտութիւնը. իր եսը ցուցագրելը, իբրև անհատ

¹ «Գրիգոր Նարեկացի», ԼԵԵ, Թ. Հատոր, էջ 115:

Արքի Յովհաննիսեան

Խօսիլը կը համարուի հանրութեան զգացումը վիրաւորող երեւոյթ,
կ'ըզգացուի իբրև խրոխտանք ու ամբարիշտութիւն:

ԵՐԲ Է ԾՆՈՒԵԼ ԹԱՏԵՐԱԿ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Շանթի քատերական մտածողութեան մէջ թատերակ քառը առաջին
անգամ տպագիր նկատում ենի նրա, 1921 թ. Թեհրան գրուած եւ 1923
թուին թոստոն Հայրենիք ամսագրում հրատարակուած, թեմական
երկի վերնագրին կցուած՝

ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ
ԹԱՏԵՐԱԿ ԶՈՐԱ ԱՐԱՐՈՎ
ԴԵՎՔԸ Կը պատահի ԺԲ-ՐԴ դարուն ԱԿԻՊՔԸ

Էական է նշել, որ Շանթի քատերական մտածողութեան մէջ, ինքնա-
տիպ ձեւով քեմի համար գրուած երկը անուանելու հարցը, դրուած է
հենց սկզբից: Անտվերպից, Թումանեանին գրուած մէկ քացիկում,
քատերագիրը քատերակ ձեւի տակ, իր քատերական բանաձեւումների
համար, արդէն փորձել էր կերտել մի նոր քառ: Բացիկի բովանդակու-
թիւնը հետեւեալն է.

ՕՀԱՅՆՀՇԱ Հան, արամայիս կենացը, որ Հիմա, այս վայրկեանիս
աւարտեցի:

ԼԵԿՈՆԴ

Այսպէս ուրեմն՝ «Ուրիշի Համար»ս մտաւ դարակս մինչեւ ց'նոր
անօրինութիւն հանգստանալու: Ես ալ քիչիկ մը հանգստանամ ու
սկսեմ արդէն երկրորդ թատերկու: Կը տեսնես, որ մե՛ծ գործի վրա
եմ.

Համբոյրներս:

Անտվերպ, Նոյեմբեր 11, 1901:²

Ապագայում՝ սկսեալ 1921 թուի Օգոստոսից կիրառած քատերակ
բնորոշումը, Շանթ քացատրել է այսպէս. «Թատերական ներկայաց-
ման համար յատկացուած, կամ իբրև թէ ներկայացնելու համար
ստեղծուած գրական գեղարուեստական երկը կ'անուանեմ քատերակ: Այնպէս ինչպէս որ պատմուած գեղարուեստական երկը կ'անուանեն

¹ Նոյնը:

² Երեւան, ԳԱԹ, Յովհաննես Թումանեան ֆոնդ:

Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

վէպ եւ քննարական գեղարուեստական երկերը՝ Երգ»¹: Այս բացատրութեան մէջ Շանթը ընդգծել է, բնմական արուեստին առընչուող, իր մանրագեին բառակերտումների ըմբացքը ու դրանց արարող մտածողութիւնը: Այսանդ եւս, հեղինակը փնտրել է անձնական եւ հաւաքական գիտակցութիւնների յարաբերութիւնը, փոքր եսը (կ'անուանեն) մեծ հսկին (կ'անուանեն) շաղկապող միտ բանին:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՀՈՒԹԻՒՆԸ

Թատրոնի եւ բատերական գրականութեան մասին, Լեւոն Շանթ գրել է երեք տեսական յօդուածներ: Երրեակը ունի «Թատերական կառուցում» ընդհանուր վերնագիրը եւ ընդգրկում է՝

Ա. Թատրոնը եւ իր պահանջները (1929)

Բ. Թատերական ու գրական երկերը (Համադրութիւն մը) (1929)

Գ. Թատերական գրուածքները (1931)

Ցատկանշական է, որ հիմնականում գրաբանական բնոյք ունեցող, նշուած տեսական, բատերագիտական գրութիւնները, շարադրուել ու երատարակուել են Շանթի բոլոր ինքնուրոյն բևմախաղերի գրութիւններից յետոյ: Ուրեմն հեղինակը տեսականին է դիմել անձնական փորձառութիւնից յետոյ միայն ու վերստին իր բևմախաղերին վերադառնալով փորձել է արդեն հանրութեանը յայտնի գրութիւնների մէջ՝ վափոխուրիւններ ներմուծել: «Հայերէնի բառակազմութիւնը եւ յուգական զինքերը լեզուի» հատորի մէջ, նա գրել է. «թատրոնը բառերով հիստուած գեղարուեստին տաճարն է»²: Այս տաճարական մտածողութեան ու գիտակցութեան բերումով է, որ Ալեքսանդրիա եւ Թրանսիա գրուած բատրոնին առընչուող տեսարանական գրութիւնները, ամ ձամք խմբաւորել է ընկերաբանական ու գրաբանական հարցեր շօշափող՝ Լեւոն Շանթի երկերի Ե. հատորի մէջ՝ «Բանահիւ առկան նարտարապետութիւն» բաժնի է. գլխում:

Նախապէս՝ Գ. գլխի «Պատմական կառուցումներ» ընդհանուր վերնագրի տակ Շանթ գրել է. «Կամք արտայայտող գործողութիւններու նկարագրութիւնը կ'անուանենք պատմութիւն: Պատմութիւնը կամքի

¹ «Թատերական գրուածքները», Հայրենիք Ամսագիր, Յուլիս 1931, էջ 82: «Թատերական գրութեան տեսակները», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 447:

² Հայերէնի բառակազմութիւնը եւ յուգական գէնքերը լեզուի, Պէյրուք, 1950, էջ 116:

գործողութեան պատկերացումն է. կամքերու ըրածին, ճգածին եւ ուզածին բառակերու արտայայտութիւնը»¹: Կամքը պատմութեան առանցքը համարելով, հեղինակը կամքով արտայայտուած բոլոր նիգերն ու շարժումներն է, որ անուանում է գործողութիւն եւ դրա տիրոջը՝ գործող անձ: Այս մտածողութեան համաձայն ենթագիտակցական աշխարհը գործողութեան մէջ մտնելու համար կարիք ունի կամքի օգնութեան: Անհատական եսը ընդհանրական եսի ենթական կամքի օգնութեան: Այս մտածողութեան համար կարիք ունի կամքի օգնութեան: Այս մտածողութեան երկի զապանակին՝ այս դառնալու համար, կարիք ունի պատմական երկի զապանակին՝ այս ինքն կամքին: Կամքը որպէսզի ուրիշի ուշադրութիւնը գրաւել կարողանայ, կարիք ունի կրթութեան, մարզանիքի ու վարժանիքի:

Քնարական, նկարագրական ու դատողական երկերը կը նմանին ու կը համապատասխանեն էական բայով՝ կազմըւած նախադասութիւններուն, որոնք վիճակ մը կը ցուցընեն եւ ոչ գործողութիւն, կը հաստատածն միայն՝ թէ ինչ մը ի՞նչ է կամ ի՞նչպէս է, իհարկէ եթէ երկը առնենք իր լրիւ ամբողջութեան մէջ:²

Այս բացատրութեամբ Շանթ հասնում է իր թատերական մտածողութեան էութեան ու եզրակացնում է.

Իսկ կամքի արտայայտութիւն եղող երկերը, այսինքն պատմութիւնները եւ թատերական գրուածքները, որոնք իրենց ներքին էութեամբ պատմութիւն մըն են նորէն, կը նմանին ու կը համապատասխանեն այն նախադասութիւններուն, որոնց ստորոգիչը անցուկ սեռի բայ մըն է՝ ներգործական, անցողական, կրաւորական բայ մը, այսինքն՝ երբ շարժում մը, գործողութիւն մը կը կատարուի, որ կ'անցնի ու կ'ազդէ ուրիշներուն. եւ կամ առնըւազն գործոն չեղոք մըն է, այսինքն՝ թէեւ գործողութիւնը ուրիշներուն չանցնիր, բայց գործողութիւն մը կը կատարուի, երբ չեղոք բայը բան մը կ'ընէ, եւ ոչ թէ բան մը կ'ըլլայ, օրինակ՝ կը վազէ, կը ցատկէ, կը հաղայ:

Թատերական տեսութիւնների իր անդրանիկ յօդուածը Շանթ սկսում է «Բեմի երեք տարրերը» ենթավերնագրով ուր՝ երբորդ պարբերութեան մէջ, խտացուած է՝ «Ամէն թատերական ներկայացում կը գոյանայ երեք բաղադրիչ մասերու անբակտելի գործողութեամբ. բեմավարու-

¹ «Բանահիւսական նարտարապետութիւն», ԼՇԵ, Ե. Հասոր, Էջ 348:

² Նոյնը՝ Էջ 351:

³ Նոյնը:

Հետոն Շանթ եւ իր քատերական մտածողութիւնը

թիւն, դերասանութիւն եւ բնագիր »¹: Կարելի է եզրակացնել թէ այս երրեակի մէջ, գործօն է նաև հակառակը՝ բնագիր, դերակատար եւ բեմադրութիւն համակարգը:


Նանք «Թատրոնը եւ իր պահանջները» յօդուածում, բնագրի համար նախ կիրառում է բեմախաղ բառը: Ապա, երկրորդ տեսական գրութեան մէջ, ընդհանուր առմամբ իրրեւ հակադրութիւն, ներկայացնելով «Թատերական գրական երկերը», քատերակ բնորոշումին դիմելով հաստատակամ գրում է.

Թատերակ մը ինչքան որ շատ նիւթ տայ բեմը յարդարողին, կահաւորողին, լուսաբարին եւ լայն հնարաւորութիւններ անոնց երեւակայութեան, այնքան կը շահի բեմականորէն: Թատերակ մը ինչքան որ շատ բան կարողանայ արտայարտել իր հերոսներու հոգիէն անմիջապէս դերասաններու շարժումներովը, դիմախաղով եւ բեմին վրայ կատարուող տեսանելի գործողութիւններով, այնքան կը դառնայ բեմական: Թատերակ մը ինչքան որ գեղջէ իր մէջէն ամեն պատմական, նկարագրական ու գատողական մասերը, այլ եւ բանահիւսութեան նրբութիւնները, զարդերն ու զարդարանքները, այնքան կը թիւթեւնայ եւ կը գառնայ բեմին յատուկ:²

Վերջապէս, երրորդ գրաբանական՝ «Թատերական գրուածքները» յօդածի մէջ է միայն, որ Շանթ պարզաբանում է քատերակ բնորոշման մէջ ներառուած ու ամփոփուած իր մտածողութիւնը եւ տալիս է քատերակի հնքարաժանումները, հետեւեալ կապակցութեամբ ու անուանումներով:

¹ «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Յուլիս 1929, էջ 82: ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 410:

² «Թատերական ու գրական երկերը» (Համադրութիւն մը), Հայրենիք Ամս., Օգոստոս 1929, էջ 66: ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 430:



Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

ՅՈՒԶԱԽԱՆԱԴԻ նպատակը յուզելն է: Այն հոգու լուրջ բելերի հետ գործ ունի եւ բաժանում է չորս տեսակի:

Ա. - **Խորհրդերգութիւնը** դեռ կեանքից ու պաշտամունքից չզատուած ներկայացումն է: Դրանց մեջ աստուածներն ու սուրբերը թեմ են դուրս գալիս իրենց սրբազն կարողութիւններով: Նրանք գերբնականից անցնում են իրականին: Այդպիսի ներկայացումներ են՝ յունական, հնդկական խորհրդերգութիւններն ու պարսիկների բազին: Այս ձեւից է ծնուել միջնադարի քրիստոնեական Միստերիան, որ եկեղեցական ծխական արարողութիւններից զատուած, պատկերացնում է Քրիստոսի մարդեղութեան, չարչաբների եւ սուրբ գրքի միւս նիւթերի ու կրօնական աւանդութիւնների պատումները: Շանթ Միստերիան համարում է քրիստոնեական եղերգութեան մայրը եւ արդի Դրամաի մեծ մայրը:

Բ. - **Եղերերգութիւն** բնորոշումը Շանթ կիրառում է ողբերգութեան համար: Նրա մեջ է, որ գերբնական եւ դիցազնական դեմքերը նակատագրի դէմ պայքար մղելով, աստուածայինից անցնում են մարդկայինին ու մօսենում են մարդկային կեանքի խորը երեւոյքներին: Եղերերգութիւնների նիւթը կրօնական, պատմական, առասպելական աւանդոյքներն ու ժամանակակից կեանքն է: Վերջինի ցայտուն օրինակներից է Էսֆիլոսի «Պարսիկներ»ը: Այն Յոյների պատմութեան մեջ յեղաշջում յառաջացրեց եւ նրանց մշակոյթի միակցութեան ու յաղթանակի խորհրդանիշներից մէկը դարձաւ:

Գ. - **Դրամաի** գործող անձինք սովորական մարդիկ են եւ նրանց միշավայրը նման է մեր առօրեային: Այնտեղ հեղինակը, իր ընտրած նիւթի նկատմամբ, աւելի անկախ ու ազատ դիրք ունի: Մինչեւ անգամ դիմում է անձնական նիւթերի: Դրանք շօշափելով, թեմ է հանում կեանքի արտաքինն ու ներքինը: Այդպիսով հանրային պատկերացումից նա անցնում է անհատականին: Մեր օրերում դրաման է միայն, որ մօս է մեր կեանքին:

Դ. - **Մելոդրաման** եղծուած դրամա է: Հեղինակը նրա մեջ լոկ արտաքին երեւոյք ներ է շօշափում: Գրում է անմշակ հոգիների համար: Նա ստուար մեծամասնութեան ու «հասարակ» խափ ուշադրութիւնը գրաւելու համար, ցնիչ պահեր է ստեղծում, արցունք է խլում եւ հում կրիեր է բորբոքում: Շանթ Մելոդրաման նմանեցնում է խարդախուած գինու:

Արքի Յովհաննիսեան

ԿԱՏԱԿԱՆԱՐԱԿԻ նպատակը ծիծաղեցնելն է: Այն ցնցում է հոգու զուարք թելերը: Նրա եւ յուզախաղի մէջ հնորդ խորը կապ կայ: Արդի դրամայում եւս կան այդ կապը արտայայտող երկեր: Դրանք միաժամանակ թէ՛ դրամա եւ թէ՛ կատակերգութիւն են ու յանախ պարզապէս կոչում են՝ կատակ: Օրինակ՝ Սունդուկխանի կամ Զեխովի թեմախաղը թերը: Մեր օրերում կատակախաղը չորս տեսակի է:

Ա. - **Կատակերգութիւնը** ներքնապէս կապուած է յուզախաղին: Թատրոնը երբ դեռ պարման առումով չէր բաժանուել կրօնական ծէսից, այն միայն բացասական գործող անձանց միջոցով էր ծիծաղ առաջցում: Դրա հետեւանեով մէջտեղ եկան՝ մուր ու ալիւրով դէմքը ծածկած խեղկատակը, պախօսութիւնը, առվորական, մարդկային թերութիւններն իրենց մէջ խտացնող, անմիջապէս նանաչելի գործող անձինք եւ այլն: Դրանց միակ նպատակը, կեանիք ու հոգու իրական պատկերացումներով հանդիսանես զուարեացնելն էր:

Բ. - **Երգիծախաղը** դրսեւրում է հեղինակի անհատական ցաւը: Նա այլեւս չէ բաւարարում միայն պարզապէս զուարեացնելով: Ծիծաղի հետ միասեղ, զգացնել է տալիս իր բողոքը, բննադատութիւնը: Ցանկանում է ուղղել, սրբազնել տալ պախարակելի երեւոյթները:

Գ. - **Ծաղրախաղը** ծնուռում է երբ երգիծանեք փոխում է ծաղրի: Այս դէպքում հեղինակը խայրում, ցաւեցնում, վիրաւրում, կամ չարամիտ նպատակ ու միտում է հետապնդում:

Դ. - **Զաւեշոր** կատակերգութեան ամենագոնեիկ ձեւն է: Զաւեշոր ստեղծում է երբ երկը, առանց որեւէ ներքին կեցուածքի, հիւանդագին ու չափազանց, հակադրուում ու ժիշտում է գեղարուեստի ներմին նշմարտութիւնը: Այն աննպատակ, միայն ծիծաղ է փետրում. կամ նշմարտութիւնը: Այն աննպատակ, միայն հանելի ու գեղեցիկ երեւոյթներ է աչքի ու ականջի համար, միայն հանելի ու գեղեցիկ երեւոյթներ է ցուցադրում: Քանի որ հում ծիծաղ ու հում կրտեր է արբնացնում, Շանթի մօս համահաւասար է՝ ալքոհոլի, նիկոտինի ու բմբեցուցիչի ազդեցութեան տակ բանող մտքերի արտադրութեան:

ԽԱՂը ընդգրկում է վերը նշուած բոլոր բնորոշումները: Այն քատերակի պէս միաժամանակ գործ ունի հոգու բոլոր թելերի հետ:

Լեւոն Շանթ եւ իր բատերական մտածողութիւնը

ՀՈԳԵԿԵՐՏՈՒՄ

(ՆՄՈՅԾ)

Շանթի բատերական մտածողութիւնը միշտ էլ հետաքրքրուել ու գոյնել է պատկերացնել, մարմնաւորել, թեմ հանել հոգու մէջ ծայր առած շարժումները։ Նա գրել է՝ «Մեր հոգին ինքովինքը կը պատկերացնէ ինքն իրմէն դրւու։ ինքովինքը կ'առարկայացնէ անի կամ պակաս յատակութեամբ, աւելի կամ պակաս պատկերելի կամ վերացական ձեւով ու դէմ-դէմի կը նստի խօսակցութեան»¹։ Խորանալով իր հետաքրքրութեան մէջ ու հաղորդակցուելով ժամանակակից ստեղծագործ մտքի զանազան հոլովոյքների հետ, Շանթ նկատել է՝

Գրականութեան արդի զարգացումը գէպի հոգին խորքերը կ'երթայ. արդի վէպերուն եւ թատրուակներուն մէջ կարծես ներկայացման բեմը կը գառնայ հոգին։ Այս անսակէտէն հետաքրքիր նմուշ մըն է արդի մեծ հնդիկ բանաստեղծի՝ Թակորի «Մութին մէջը»², ուր բեմը հոգին կը ներկայացնէ եւ այդ հոգին մութին մէջն է, որ կը խաղցըւի ներքին տրաման։

Թակորի մարդկային հոգու բանձրի մէջ դիտուած դրաման իր արձագանքն է գտնել Շղթայւածը խարի մէջ ուր միջնադարեան Անին, խնանկարի պէս իր մէջ միատեղելով զանազան դասակարգի ու ցեղի պատկան տիպարներ, դրոյքներ ու գործողութիւններ, հակադրուած է Մասիսի խորին խորքերում գերուած հայ ոգու խտացուած ձայնին ու մշուշուած պատկերին։

Շանթի բատերական եւ գրաքանական երկերի մէջ ակնայայտ է, հոգեկերտման համար նրա բաննեցրած զանքը։ «Թատրոնը եւ իր սպահանցները» տեսութեան մէջ կարդում ենք.

Սկիզբ արդէն բեմի երեք տարրերը հզործողութիւն, թեմավարութիւն եւ բնագիրը՝ ձուլուած են եղեր իրարու գերասանի անձին մէջ։ Երբ գեռ պատրաստ ու աչքի իյնող կարեւոր երկեր չկային, գլխաւոր գերասանը ինքն էր, որ խաղ մը կը կարկտէր կամ կը ստեղծէր, ինքն ալ կը խաղար մէկ-երկու ընկերներու հետ եւ ինքն ալ կը վարէր ամբողջ խաղը։ Յունաստանի բեմական ամենափայլուն շրջանին ամենէն խոշոր բեմական երկեր ստեղծագործող դէմքերը՝ էսիսիլ, Սոփոկլ, Եւրիպիտ ու Արիստոֆան՝ գերասան էին միեւնոյն

¹ «Մենն ու նիւթը բանահիւսութեան», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 261:

² Rabindranath Tagore, *The King of the Dark Chamber*, London, 1915.

³ «Բանահիւսական նարտարապետութիւն», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 397-398:

Արքի Յովհաննիսեան

Ժամանակ՝ եւ իրենց երկերը բեմադրող։ Նոյնն է եւ Մոլիէր, նոյնն է Շէքսպիր։¹

Միեւնոյն սկզբնական դրոյթին հասնելու համար, Շղթայւածը խաղի մեջ, Շանք իր խոկ նմանութեամբ, օգտագործելով իր ճշմարիտ ազգանուան մի մասը (Նաղաշքանդեան), կերտել է Մանիքէական agnostic գաղափարախօսութեամբ բանող Նաղաշի տիպարը։ Այդպիսով ծպոտուած հեղինակը բեմ է մտել թէ իրրեւ գործող անձ եւ թէ իրրեւ բեմավար։ Նա մինչեւ խաղի կեսը, ներկայանում է միմիայն իր մասին հասած ուղղակի կամ կողմնակի խօսերի միջոցով։ Նաղաշը մեզ համար կայ միայն խաղի միւս գործող անձանց շնորհիւ։ Նա իրրեւ անձ արարում է միայն մեր երեւակայութեամբ։ Նա մտապատկեր է։ Նաղաշը (հեղինակը) վերջապէս բեմի վրայ մարմնաւրուում, տեսանելի է դառնում Անդի պարխապերից դուրս, Մաղկանորի մեջ, մայրամուտից ժիշ առաջ, հեռուում լսուող դարբինների ծէսի ու իրիկնային ժամերգութեան կոչնակների ու զանգերի ձայնի ներքոյ։

Մեզ ներկայացած գլխահակ ու մտախոհ Նաղաշ-հեղինակի ժայերը կասեցնում են, նրա դէմ ելած Հարթի հրամանով՝ «Կեցի՛ր»։ Եւ հէնց այդ տեր՝ այսինքն երրորդ արարի առաջին տեսարանի մեջ է, որ Նաղաշը Հարթի հետ ընդամենը հինգ փոխասացութիւնից յետոյ, կորցնում է իր որոշիչ «Ը»ը եւ դառնում է Նաղաշ։ Այսպիսով նա վեր է ածում ընդհանրական տիպարի ու նրա անհատական եօր միակցում է ընդհանրական ԵՄին։ Հեղինակի մտածողութիւնը վեր է ածում գործող բանականութեան դառնում է ներքնապէս բանող գործողութեան իր ան։

Այս նրբին գրաբանական, թատերայնօրէն գործօն, բեմադրական առումով մեկնարանական դեր ունեցող միջոցառումը՝ գործող անձին նախ Նաղաշը եւ ապա Նաղաշ բնորոշելը, պարզապէս ուշիմ դերասանի ու բեմադիրի համար՝ կարեւոր իմացական շարժառիք ու խորունկ ելակէտ է առաջադրում։ Մեծ քատերագէտի ու վարպետ հոգեբանի գործ է սա։ Այստեղ՝ իմենասիսկ կերպով, թատերագրական ու կատարողական արուեստները կապակցելու համար, իրրեւ գործօն տարր ու խորհուրդ, կիրառուել է Հայոց լեզուին յատուկ մի պարզ ժերականական օրէնք։ Հայ թատերական գրականութեան անդաստանում, այս ժամ խորունկ, հասուն, նրբին ու բծախնդիր՝ աչքին նախ վրիսակ ու ոչ

¹ «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Յովիս 1929, Էջ 83: ԼՇԵ, Ե. Հատոր, Էջ 412:

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

կարեւոր բուացող, սակայն իր էութեամբ խաղի իմաստը գործողութեան մղող ու նրան հիմնական շունչ պարզեւող, նման գրական հնարք դժուար է գտնել: Նաղաշ, իբրև ընդհանրացած ես, խօսում է այսպէս՝ «Բայց չէ՞ որ, քորիկ, ես լոյս կը փնտոեմ եւ ազատութիւն եւ՝ մեզի համար, եւ՝ ինձի, եւ՝ ամենուն»¹: Նաղաշը՝ Նաղաշ է դառնում այս բառերով եւ Նաղաշ է մնում մինչեւ խարոյկին յանձնուելը:

Նաղաշի տիպարն ընկալելու եւ այն բատերայնօրէն իրագործելու՝ դրսեւորելու, մարմնաւորելու ու խօսեցնելու գործում, նշուածը անմկան բողնելու դպիում, Շղթայւածը բեմի վրայ պիտի զրկուի իր ներքին գործողութեան լղացքից: Շանրի փնտրած անհատական ու հաւաքական բանականութիւնները չախտի կարողանան մի միանց հիւմելով, գիտակցութեան վերածուել²: Այս միջոցառումը, իբրեւ բատերական գործօն հաղորդանշան, բեմականօրէն էլ աւելի է իմաստաւորում ու ընդհանրական դառնում, երբ մայրամուտի պահին, Անիի պարիսպներից դուրս, իր հիմնական նառը արտասանելիս՝ Նաղաշ, իր ունկնդիր հանդիսատեսների հետ, աստի նանարար բաղւում է մօսեցող գիշերային բանար խաւարի մէջ: Այդ խաւարի մէջ է ուր հանդիպում ենիք, ժողովրդի հաւաքական գիտակցութեան խորին խորքերում գտնըւող, հաւաքական եսի կենդրոնում սեղ գտած ուժերին. Կեամիք Դեւին ու շղթայուած Արտաւագդին՝ մեր գիտակից, դեռ արթուն մնացած ու բանող եմի ճայնին:

«ԿԵԱՆՔԻ ԴԵՒԾ - (Քարայրի մուտքին) Արտաւ'զդ, արթու՞ն ես:

Կը լսուի շղթաներու շպինդը. եւ լռութիւն:

ԿԵԱՆՔԻ ԴԵՒԾ - Նիրիա՞ն ես, կը խորիի՞ս թէ կ'անիծես:

ԱՐՏԱՎԱԳԴԻ ԶԱՅՆԸ - Կը տենչա'մ»³:

«Զայնը շարժում ու արտայայտութիւն» ենթավերնագրի տակ կարդում ենիք:

¹ Շղթայւածը, Թեհրան, 1921, էջ 65:

² Շանրի բատերական երկերի, յետ մահու հրատարակութիւնների մէջ կատարուած, անսեղի ու վնասակար միջամտութիւնների մասին տե՛ս մեր յօդուածաշարք՝ «Ցորենն ու որոմը», Յառաջ - Միանք - Արուեստ, Փարիզ, Մայիս-Յունիս-Յուլիս 1992:

³ Շղթայւածը, Թեհրան, 1921, էջ 72:

ինչպէս բոլոր միւս մկանային շարժումները յաճախակի կրկնութեամբ կը դառնան նշան մը, միջոց մը ուրիշներու ներքին աշխարհին մէջ կատարւող յուզական վիճակը հասկընալու, նոյնը կ'ըլլայ եւ ձայնը: Որոշ ձայներ, որոշ տեսակի ձայներ, որոշ յաջորդականութեամբ ձայներ, որոշ շեշտերով ձայներ կրկնւելով միշտ իրեւ պատասխան նոյն ներքին յուզումներուն եւ կապուելով նոյն ցանկովիններուն, վախերուն, բարկութեան կամ կարօտին, կը դառնան երկրորդ միջոց մը կենդանիի հոգեկան վիճակը ըմբռնելու անոր ցանկացածն ու մտածածը հասկնալու:

(...) Բարձր տեսակի անասուններուն վրայ արգէն կ'ըսկաի աչքի իյնալ ձայնի այս գերազանցութիւնը, իրեւ հոգիի արտայայտութեան յատուկ գործիքի, բայց մարդ արարածի վրայ այդ իրողութիւնը կ'ընդգծուի բացարձակապէս:

Շղթայւածը խաղը, Վ. Վունտի հոգերանական տեսութիւնների հիման վրայ շարադրուած, վերը նշուած մտածողութեան բատերական իրագործումն է: Շանք իր ոչ մէկ բեմախաղի մէջ շարժումը, խօսքը իր բազմազան արտայայշչածեւերով, բարբաներով ու կշռոյթներով, պատկերը իր հարուստ երանգներով, ըստ իր բաներական մտածողութեան այնքան յաջող չի օգտագործել, որքան այստեղ: Այս խաղի մէջ, իմացականն ու զգացականը միշտ միատեղ են բանում: Հեղինակը յաջողել է, դիտողի ենթագիտական եւ գիտակցական աշխարհները անընդհատ յարակցուած յարաքերութեան մէջ պահել: Հակառակ Շանքի միւս բեմախաղերին, որ գրական առումով համոյքով են ընթերցում ու վայելք են պատճառում, **Շղթայւածը** հիասքափեցնում է: Պատճառը գրութեան գուտ բեմական խաղ լինելն է: Այն իր արժանիքները դրսեւընել է կարող միայն խաղարկուելու, բեմադրուելու՝ հենչելու եւ դիտուելու գէպիւմ: **Շղթայւածը** առանց ձայնի խաղի ու դրա երանգաւորումների գործօն ներկայութեան, հաշմանդամ մարմին է³:

¹ «Սեռն ու նիւթը բանահիւսութեան», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 232-233:

² Նոյնը, էջ 234:

³ Երբ 1921 թուի Փետրուարեան ապստամբութիւնների օրերին Շանք, մի բանի ընկերների հետ, ազատում է Բոլշևիկների բանտից, ստիպուած Հայաստանից անցնում է Պարսկաստան: Նա ձեռագրերից իր հետ է վերցնում միայն նորաւարտ **Շղթայւածը**: Թաւրիզում, Պիռնեանի բնակարանում՝ Սիմոն Վրացեանի, Յովհաննէս Քաջազնունու, Ռուբէն Դարբինեանի, Մալխանի, Աղրալեանի եւ մի քանի սուրբ մտաւորականների ու բաղաժական գործիչների համար, կարդում է խաղը: Այն՝ բացառութեամբ Աղրալեանի, ձախող տպաւորութիւն է բողնում միւսների վրայ: Շանք չազդուած բացասական ընդու

Լեռոն Շահը եւ իր բատերական մտածողութիւնը

Կեանքի մէջ աչքը միշտ գերադաս է ականջէն, իբրեւ աւելի յստակ, աւելի ճիշտ եւ աւելի բազմակողմանի տեղեկատու, մասնաւորապէս ինչ որ կը վերաբերի իրերի լոյսին, գոյնին, ձեւին, դիրքին, շարժումին, տեղափոխութեան ու վիճակափոխութեան:

Այս պայմաններուն մէջ ականջը շատ տկար փոխարինող մըն է: Ինչքան ալ նուրբ լեզու ունենանք եւ նկարագրելու շնորհք, փոխարինել չենք կրնար երբէք աչքով տեսնուածը: Միայն հոն ուղ աչքը ուեւէ արգելքի մը պատճառով լրիւ տեղեկացնել չի կրնար մեզի այդ բոլորի մասին, հոն է, որ կը սկսի ձայնի ու ականջի կարեւորութիւնը, իսկ այս ամենը, որ աչքով ստանալ բնաւ չենք կրնար, բնականաբար կը մնայ ականջի տիրապետութեան բուն սահմաններուն մէջ:¹

Այս սահմանների մէջ է ներառուած յատկապէս Շղթայւածը խաղի ներհուն ընթացքը, ուր կարող ենք յիշել անէծքի տեսարանը, երբ կիրակնամուտին մենակ մնացած Հայրը, երեք անգամ զարկելով առլին, կատարում է դարբինների աւանդական դարաւոր ծէս-անէծքը:

«ՀԱՅՐԸ - (Մինակ է: Դժուարանալով կը կռանայ, կը վերցնէ կռանը, կը հանէ գդակը, ջերմեռանդ զիրքով կը նայի վեր, ու գանդաղ կը զարնէ սալին երեք անգամ) Թող ամրանան Արտաւագդի շղթաները, բող ամրանան անիծւածի շղթաները, բող ամրանան աւերիչի շղթաները»²:

Ըստ աւանդութեան, ծէս-անէծքով աւարտում է աշխատանքի շարաքը: Սակայն մենք, Շանքի բատերական մտածողութեան շնորհիւ, դրանից յետոյ լսում ենք փակուող դռան կողպէքի կրկնակի դարձը, մի պահ պարում ենք տիրող լուստիւնն ու մութը եւ ֆիշ անց, հեռուում

Ելութիւնից, Թեհրան հասնելուն պէս, հաստակամ հրատակում է խաղը: Ապա Թեհրանի հիւսիսային մասում գտնուող, Թաջրիշ ամառանոցում գրում է Ինկած Բերդի հշխանուէին բատերակը: Մեծ հաւանականութեամբ նոյն օրերին, գրում է նաև Կայսրի յաւելեալ՝ «Նախընթաց արար»ը: Երբ լոյս է տեսնում Շղթայւածը, գրքից օրինակներ են ուղարկում Հայաստան: Խաղը բնարկելու համար, 1922 բուին Երևանի համալսարանականներից կազմուած Գրական Միութիւնը, գրական դատ է կազմակերպում: Դատախագների շարքում է Եղել՝ Գուրգեն Մահարի: Տե՛ս Ա. Արծրունի, «Շղթայւած»ի դատավարութիւնը», Հայրենիք Ամս., 1952, թիւ 11:

¹ «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Ցուլիս 1929, էջ 85: ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 415:

² Շղթայւածը, Թեհրան, 1921, էջ 25-27: Այս բաժինը եւ նրան արձագանքող Թգուկմինի երգը կատարուեց, Երևան կայստած Թատերաբանախօսութեան ընթացքում:

աղօս լոյսի կէտեր նշմարելով, լսում ենի խորքից հնչող Թզուկների երգը.

«Թողէ՛ք թողէ՛ք,
թողէ՛ք հանքը,
աշխատանքը,
ու դուրս եկէ՛ք
երկրի փորէն,
խորէն, հորէն,
բիւր ոլորէն,
նեղ խաւարէն,
հոծ խաւարէն,
սեւ ակներէն,
երակներէն,
կրակներէն,
խորէն, հորէն,
երկրի փորէն.
պահ մը ուղղե՛նք
թիկունքները,
դիմաւորե՛նք
նորեկները»:¹

ԲԵՄԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Շանքի բեմական լեզուն խիստ ինքնատիպ, եզակի ու եկմնովին ազգային է: Նա համոզուած է որ «Լեզուն կը բխի ժողովուրդի մը հոգերանութեան բուն խորքերէն եւ արդէն ինքնին անոր հոգիին հարազատ մէկ կտօրն է: Մինչեւ մարդուս միտքը չծնի իր լեզուն, հանականութիւնը թեւ առնել չի կրնար ու չի կրնար սաւառնի հոգեկան ու բաղաբակրթական բարձրունեները»²:

¹ Նշուած երգը հնչեց Սունդուկեանի Թատրոնի հանդիսասրահում, հանդիսատէսների կողքին զանազան շարքերում նատօդ՝ Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Կամերային Երգչախմբի անդամների կատարմամբ:

² «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Յունու. 1923, էջ 21: ԼՇԵ, Ե. Հասոր, էջ 20:

Հետոն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Թատրոնի պարագային լեզուի հարցը բազմակողմանի է: Գրական արտայայտ չաձեւ ու միջոց լինելուց բացի, այն ունի ոչ ընդհանրապէս ընդունուած ժերականական խնդիրներ, ինչպէս նաեւ յուզական ու հնչողական հարցեր: Օրինակ, գործող անձը բեմի վրայ իր հոգեվիճակն ու էութիւնը դրսեւորելու համար, երբեմն պէտք ունի ժերականական առումով վխալ շարադրուած խօսի: Հայերէնի բառակազմութիւնը եւ յուզական գէնքերը լեզուի մէջ կարդում ենք.

Լեզուի մը յօրինուածքը ուսումնասիրելու ատեն քերականութիւնները ընդհանրապէս աչքի առաջ կ'ունենան խօսքի կազմին այն յատկութիւնները միայն, որոնք կը պայմանաւորեն արտայայտութեան իմացական-տրամաքանական կազմը, այսինքն ճշգրիտն ու կանոնաւորութիւնը ըստած խօսքի:

Բայց լեզուի գործածութեան դրդիչն ու պատճառը միշտ ու միայն դատողութիւնն ու իմացականութիւնը չէ:¹

Դրա բերումով, յուզական եւ զգացական դրոյթներն ու վիճակները թեմական երկերում յանախ շատ աւելի գործոն դեր ունեն ներքին ու արտաքին գործողութիւններ արարելու մէջ, բայ ժերականօրէն նշգրիտ շարադրուած նախադասութիւնները: «Ամեն խօսող իր ամեն մէկ նախադասութիւնը կազմելու ատեն նախադասութեան անդամներու դասաւորութեամբն իսկ կը յայտնէ իր հոգեկան, անձնական մասնակցութեան չափը իր ըսածին. այսինքն ի՞նչ աստիճան շահագրգիռ է, ի՞նչ չափով հանգիստ է կամ վրդովուած է իր հոգին իր ըսածին»²:

Շունչը եւ մկանային լեզուի գործածութիւնը բատերական երկերում, առաջնահերթ խնդիրներից մէկն է: Թղթի վրայ դիւրին ու հանելի բուացող լեզուն, անպայմանօրէն դերասանի կողմից արտաքերուելու համար յարմար չէ: Հնչելու համար, լեզուն լոկ գրական մտահոգութիւններով չէ որ պիտի եիւսուի: Բնմի պահանջները միան գամայն տարրեր են: «Իրականօրէն կեանքի մէջ եւ գրեթու սոսուար մեծամասնութեան մէջ խօսքը չըստիր միայն “միտք մը արտայայտելու համար” ինչպէս կը կրկնենք սովորաբար, այլ միտք մը կ'արտայայտուի ցանկութիւն մը, յուգում մը, զգացում մը բավելու կամ բաւարարելու համար: Ուրիշ խօսքով միտքն ու արտայայտութիւնը կը ծա-

¹ Հայերէնի բառակազմութիւնը եւ յուզական գէնքերը լեզուի, էջ 102:

² Նոյնը՝ էջ 109:

Արքի Յովհաննիսեան

ուայեն յուզագգացական աշխարհի ներքին ու արտաքին պահանջներն»¹:

Շանք ինքնատիպ լեզուի ու գեղարուեստների մէջ, տեսնում է հոգու արտայտութիւնը ու նրա բանող, ներգործօն ուժը: Նա հաստատ համոզուած է, որ բազմագոյն հասարակութիւնների առջեւ խաղացուելիք երկը առաւել նուրբ աշխատանիք է պահանջում: Նա գիտակից է, որ բնմին հարկաւոր է զուսպ ու անմիջական լեզու եւ «Մկանային լեզվի աւելի զուսպ գործածութիւնը նշան մըն է ինքնին հոգեկան աւելի նուրբ պահանջներու եւ հոգեբանական աւելի կիրք աշխատանիքի»²:

Լեզուն հաւաքական կեանքի գիտակցուած արդիւնքը լինելով, ստեղծագործական արարումներում էական դեր ունի եւ հաղորդակցական, նաևնաշողական ու իմացական կարեւոր միջոցներից մէկն է: «Ժողովուրդի մը հոգին բահանցելու ամենէն կարճ ճամբան անոր գրականութեան ու գեղարուեստական միւս ստեղծագործութիւններուն մօտիկէն ծանօթանալն է: Որ է եւ ամենէն շիտակ ճամբան ժողովուրդ մը սիրելու: Իսկ նոյն ժողովուրդի անդամներուն վերաբերմամբ շատ աւելի զօրեղ է բնականօրէն գրականութեան, գիտութեան ու գեղարւեստի այդ կապող ու սէր ներշնչող ուժը», նկատել է Շանք:

Շանքի բոլոր բատերական երկերում լեզուն, բառի լայն իմաստով, օժտուած է ներքին զօրեղ հնչականութեամբ: Այն իւրօրինակ կերպով խարսխուած է դարաւոր մշակոյթի մէջ: Խոր ու խորունկ ակրնենքների հասած՝ այն միակցուել է արմատական գիտակցութեան հետ: Շանքի բեմախաղերի լեզուն, գրեթէ ծիսական բնոյք ունի եւ առաւել ներգործօն է երբ հնչում է: Այն շատ աւելի ազդեցիկ ու գեղեցիկ է երբ լսում է բարձրաձայն ու դրում է շարժման մէջ: Երէ բատերագիրի բեմական լեզուի ստեղծման, զարգացման ու լիացման երեք փուլերը զատել ուզենիք, պիտի նկատենիք որ նրա մշակած լեզուն, հնկած թէրդի հշկանոււզին եւ Օչին Պայլ բատերակների մէջ է որ հասել է իր հասունացման գագաթնակէտին ու սկսել է լիացում ապրել:

Լեզուն ժողովուրդի եռւթեան խորքերից ծնուելով, ունակ է տարբեր որակի անհատականութիւններ արտայայտել: Շանք լեզուի կառոյցի

¹ Նոյնը՝ էջ 103:

² «Թարրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Յուլիս 1929, էջ 92: ԼՇԵ, Ե. Հասոր, էջ 425:

³ «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Յունու. 1923, էջ 22: ԼՇԵ, Ե. Հասոր, էջ 22:

Լեւոն Շանթ եւ իր քատերական մտածողութիւնը

մէջ փնտրում, գտնում ու բանեցնում է ժողովրդի անհատականութիւնն ընդգծող երեւոյթները: Նա համոզուած է՝

Առողջ ու բնական պայմաններու մէջ ամեն մի ժողովուրդ ունի, եւ պէտք է որ ունենայ, իր լրիւ անհատականութիւնը, այսինքն՝ ազգութիւնը կազմող թէ՛ բնական եւ թէ՛ կուլտուրական բոլոր երեւոյթները: Սակայն քիչ չեն այն ժողովուրդները, որոնք պատմական բազմադիմի պատճառներով զրկված են իրենց անհատականութիւնը կազմող մէկ կամ նոյնիսկ մէկ-քանի կողմերէ, բայց եւ այնպէս կորուսած չեն բոլորովին իրենց անհատականութիւնը եւ կ'ապրին թերի անհատականութեամբ մը. ատոնք հիւանդ կամ հաշմանդամ ժողովուրդներն են:

Զէ՞ որ հասարակութեան մէջ ալ պակաս չեն առանց ձեռքի ու ոտքի ապրող մարդիկ, կան եւ առանց ստամբուի կամ ամորձիքներու ապրողներ: Այդպէս ալ ժողովուրդներ կան, որ կ'ապրին ներքինի վիճակի մէջ, ստամբուը հանած, կամ կէս թոքով, քաշքըշուելով, արուեստական սնունդով, աղճատուած ու հեւալով:

Բայց անհատ չկայ, որ ապրիլ կարողանայ առանց սրտի, կամ բորբովին առանց թոքի կամ առանց մարսողական գործարաններու:

Այս տողերի մէջ կարելի է տեսնել Կայսր քատերակին իր վախճանին հասցնող ներքինի՝ Վասիլ Լեկապէնի Էութիւնն ու նկարագիրը, սակայն չպիտի մոռանալ որ «Հագուստն ու յարդարանին ալ արհամարել կարելի չէ, շատ կարեւոր յուզական ար մէնին ունին իրենց վրայ: Ասոնցմէ օգտըլին ալ արուեստ մըն է, ինչպէս բոլոր միւս արուեստները»¹: Նշուած տողերը, լաւագոյն կերպով բացայատում են Շանթի թեմախաղերի գործող անձանց կառուցուածքը, ինչ պիտի բիւնը, արտաքինը ու խտացնում են հեղինակի օգտագործած «լեզու»ի համակարգը:

Ուղղակի կամ ծպտած, Շանթ իր թեմախաղերի մէջ, յանախ է օգտագործել Աստուածաշնչի Հին ու Նոր Կոտակարաններից առած դրոյթներ, տիպարներ, ասացուածքներ ու կառոյցներ: Այնպէս ինչպէս սուրբ գրութիւնները, հայացուելու համար, քարգմանուցին «Աստածաշնչ» բնորոշումով, այնպէս եւս Շանթ հայ թեմի համար այնպիսի բառապաշար ու արտայայտչամեւեր է գտել, որոնք իւրայատուկ ու մօտ են հայոց լեզուին ու հոգեբանութեան:

¹ «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Յունու. 1923, էջ 19: 1ՇԵ, Ե. Հասոր, էջ 29:

² Հայերէնիք բառակազմութիւնը եւ յուզական զէնքերը լեզուի, էջ 125:

Ուրիշի Համար բատերակը փոխարերարար ունի, Մննդոցի մէջ յիշուած Ղովտի կնոշ յետադարձ հայեացքի թերումով աղի արան շառնալը: Ճամբուն վրայի մէջ միեւնոյն անուան՝ Մարի ու Մարիամ, դաստիարակ ազգային եւ օտար երկու ձեւերը, միան գամայն տարրեր ու հակադիր վիճակներ են բացայայտում: Շղթայւածը խաղի մէջ նաղաշ եւ Հարն անուանումների տակ, իբրև նախատիպ բանում են Քրիստոս/Մանի եւ Մարիամ Մագդաղենացի գոյգը: Աստուածաշնչից առնուած մի ուրիշ գաղափար՝ Հին աստուածների մէջ հիմնական առանցք դարձած, անգաղափար՝ Տանիք մօտ, դրա կատարեալ խորհրդանիշն է արատ յղութիւնն է: Տանիք մօտ, դրա կատարեալ խորհրդանիշն է՝ «Եշխանափող ամուսնական կեսներ ապրած Մարիամ Իշխանուին: Եղանական կեսները. (...) Այս տեսակետով Իշխանուին մի ազգային յղացում է. դրեւ նրա մի ֆրանսուիի եւ դիմացը մի արեղայ եւ անմիջապէս կը տեսնեն քէ ի՞նչ է նշանակում “ազգային” յղացում»¹, նկատել է Նիկոլ Աղքավեան:

Անհամար են աղօրքների, շարականների, դարձուածների եւ կրօնական բանահիւառ բիւնից ուղղակի ու անուղղակի բաղուած գաղափարներն ու տողերը: Տանիք այս բոլորը, կցել է ժողովրդական հերանուական աւանդոյթներին, մէկ ամբողջութիւն է կազմել ու դրել է իր բատերական կառոյցների հիմքում: Նա գիտակից է, որ մտայլացումներն արարելու համար, կարիք ունի այնպիսի գործող անձանց ու դրութիւնների, որոնք նանաչելի պիտի լինեն նախ դերասաննեն: Բնմի վրայ, դրանք նրա միջոցով է, որ պիտի կեսներ առնեն, շարժման մէջ վրայ, դրանք նրա միջոցով է, որ պիտի կեսնեն, շարժման մէջ մտնեն ու հաղորդակցուեն: Սակայն՝ «Երբ քեմէն ցուցադրուած անդեմն մասին կը խօսինք, բնականարար ամենէն առաջ եւ կապէս շարժման մասին կը խօսինք, բնականարար ամենէն առաջ եւ կապէս հոգեկան շարժումներու պատկերացումներն են, որ ունինք աչքի առաջ»², գրել է նա:

Ուրեմն հեղինակին հետաքրքրող շարժումը միայն չէ, որ դերասանը իր բաց աչքով է նկատում. «Անշարժ ժայռի կտոր մը իր շուրջը գալարող ու փրրփրող պիտի ն մէշտեղը ցցուած. ինքը անշարժ է, բայց շարժում կ'ըստեղծէ. ինքն է, որ կը բազմապատկէ իր ցից անշարժութեամբը ջրերուն եռացող կատաղութիւնը»³: Տանիք իր միտ

¹ Ա. Աղքավեան, «Երազ եւ մեկուսացում», Գրական-Քննադատական Երկեր, Պէյրութ, 1959, էջ 72:

² «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Յուլիս 1929, էջ 91: ԼՇԵ, Ե. Հասոր, էջ 425:

³ Նոյնը՝ էջ 92: Նոյնը՝ էջ 425:

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

բանին լրացնում է այսպէս՝ այն խորքի մէջ միեւնոյն է «Երբ անհատ մարդ մը եւ աստուածութիւնը կը դնես դէմ-դէմի վեճի մէջ, իբր եւ տեսակ մը հաւասար հաւասարի, իբրեց բոլոր սարսափելի անհատասարութեան հակառակ՝ կ'ըստացուի խոր տրամադիզմ»¹:

Նոյն մտքի բեմականացումներն են՝ Հին աստուածների մէջ գործող ժայռը՝ Վանակայրը եւ նրան շրջապատող փորորկած ծովը՝ Աքեղան ու Վանականները. արդէն նշուած, Շղթայւածը խաղի մէջ, Նաղաշի ու Հարճի հանդիպման պահը եւ դրանց յաջորդող երկու արարի մէջ ծաւալուող ամբողջ շարժումը. Կայսր բատերակի մէջ Օհան Գուրգէնի ու Հաննափ հակառակի բովանդակութեամբ, դէպի բարձրունեները ձգտող զոյց շարժումները. Ինկած Բերդի Իշխանուի Աննաի, հաստակամ վրէժիններութիւնն ու իր խսկ գգացական աշխարհի հետ տարուող ակամայ հակամարտութիւնն ու վերջապէս՝ հաւատար մատար Օշին Պայլի ներքին եսի Քայքայումը: «Գեղարուեստական արժէք ու մեծութիւն ունեցողը անշուշտ այդ հոգեկան ներքին շարժումներուն բեմադրումն է: Արտաքին շարժումները, արտաքին նիւթական գործերին ու արարողութիւնները միայն այն չափով արժէք ունին, ինչ չափով որ ներքին շարժումներու բարգմանն են ու արտայայտիչը»², Ակատել է տալիս Շանք: Այս գաղափարով են կերտուած ոչ միայն բեմախաղերի ախպարները, այլև ընտրուած է՝ դէպֆերի ժամանակաշրջանը եւ գործողութիւնների տեղը:

Շանքի մօտ ներաը եւ Գուրսը տեղի բնորոշումները, տեսանելին ու անտես աս նելին միաւեղ ներկայացնելու, ներքին կեանին բեմական մարմնաւրում տալու եւ հոգեկան լարեր հնչեցնելու համար են: «Հոգիին գործարանը կ'աշխատի երկու ուղղութեամբ՝ դէպի կեղուն եւ կեդրունէն դէպի դուրս»³. օրինակ՝ Եսի Մարդը դրամայի վերջում, Մուշեղը տեսորդի է ենթարկուում դուրսը՝ փաղոցում, սակայն հանդիսաւուը տեսնում է ներաը՝ բնակարանում ուշաթափ ընկնող Արտսիին: Միեւնոյն բնոյրի դրսեւորումներ են՝ Հին աստուածների մէջ Ճերմակաւորի, տանարի ու իգական մարմնի տեսիլքները. Շղթայւածը խաղի Մասիսի խորին խորքերում դրսեւորուած Թզուկմերը, Կեանիի Դեւը եւ Արտաւազդի Զայնը. հողի տակից լսուող, Կայսրի հետ զրուցող Զայնը եւ բազմարին նման երեւոյթներ, որոնք կերտում են

¹ «Գրիգոր Նարեկացի», ԼՇԵ, Թ. Հատոր, էջ 115-116:

² «Թատրոնը եւ իր պահանջները», Հայրենիք Ամս., Յուլիս 1929, էջ 92: ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 425:

³ «Սեռն ու նիւթը բանահիւսութեան», ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 229:

հոգեկան այն աշխարհը ուր ամէն բան խարսխուած է դարաւոր անցեալի դեռ գործօն արմատների մէջ։ Երեւոյքներն աւելի խորն ըմբռնելու համար, բաւական է փնտրել թէ Շանք ընդհանրապէս, ինչպէս է Զայնը օգտագործել ու իր բասերական մտածողութեան արտայայտիչ գործող անձերից մէկը դարձել։ Կեանքի վերջին օրերին նա շեշտել է. «Գեղարուետ ընել ուզելը եերիք չէ, գեղարուեսոը հոգին, զգացումներէն եւ յուզումներէն պէտք է հոսի, ո՞չ դիտաւորութիւննէ։ Խելքն ու վարժութիւնը պիտի գան միայն ներքին մղումին դիւրութիւն եւ հեարաւորութիւն տալու»։

Այդ բերումով է, որ Շանթի հպանցիկ վլաճի հարուածով գծուած տեսարաններն ու գործողութիւնները բացատրող տողերը, պէտք է կարդացուեն, ըմբռնուեն ու բեմադրութեան ժամանակ գործի առնուեն նոյն բժանուղութեամբ եւ ուշադրութեամբ, որքան գործող անձերի անուանումներն ու նրանց փախաացութիւնները: Սա սողերին սորկաբար ծառայել չէ նշանակում: Խօսքը վերաբերում է այդ սողերը չանտեսելուն: Շանթի բատերական մտածողութիւնը մէկ ամբողջական համակարգ է ու կարեւոր է որ իր ամբողջութեամբ ընկալուի: Գրութիւններն ներգործօն դարձնելու համար, անհրաժեշտ է որ սողերի մէջ խտացուած խմատն ու կեանքը, իրենց ամբողջութեամբ բեմադրական լեզուով մեկնաբանուեն, բարգմանուեն ու հաղորդակցուեն: Ի. դարու մարդկութեան ընդիանուր վերաբերմունքը, բեմի համեմէա նկատելով, Շանթ եզրակացրել է. «շատ բարակը փնտուի չեն կրնար քու տուածիդ կեղծին ու սուտին. եւ ցորենն ու որոմք միասին կ'անին նոյն ցորենի արտին մէջ»²:

գործող անցերի անուանությունները

Ծանր գործող է անուանում որոշակի կամքի տէր այն անձանց, որոնք ենթակայ են բժմախաղերի պատումի մէջ բանող ընդհանուր կամքին։ Նրանց դերը սպառագայութ չէ միմիշայն իրենց անձնական-սեփառական էութեամբ։ Նրանք խաղում են ուրիշ տեսակի դերեր եւս։ Իրենց մէջ խտացնում են որոշ առանձնայակուրիւններ՝ մի ամբողջ դասակարգ, հոգեբանական դրոյք, մտածողութիւն, գաղափար, գաւառ, եւ այլն ու ծառայում են որոշ հաւաքական տիպար ներկայացնելուն։

¹ «Ուսուցման նիւթերը», ԼՇԵ, է. Հատոր, Պէյրութ, 1952, էջ 111.

² «Թատերական գրուածքները», Հայրենիք Ամսագիր, Յուլիս 1931, էջ 90: ԼԵ, Ե. հասոր, էջ 459:

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Շանքի բեմախաղերի գործող անձերին կարելի է դասաւորել բնորոշ եօթ խմբերի մեջ:

Ա. - ԱՆՁՆԱՆՈՒՆ ԿՐՈՂՆԵՐ

Արրուելի, Արախսի, Սիրան, Աննա, Սահակ, Մուշեղ, Գալուստ, Մինիքար եւ այլն: Օգտագործուած անունների նշանակալից մասը, արմատական տեսակէտից իմաստալից են ու տիպարներին բնորոշում են թէ մշակութային եւ թէ հոգեբանական առումով: Կան նաև, որ Աստուածաշնչային կամ հերանոսական ծագում ունեն եւ յատկանշական են գաղափարական, մշակութային ու ժամանակագրական առումով: Յովհաննէս, Արքահամ, Սահակ, Սողոմոն (հայացուած՝ երեական), Սուլէյման (վերջինի Խոլամական տարրերակը), Թիգրա (Լատինական), Օշին (միջնադարեան հայացուած՝ պարսկա-պահլաւական), Մուշեղ (նախարար՝ հայ պատմա-քաղաքական դէմք), Օհաննէս (Յովհաննէսի ժողովրդականացուած ձեւը), Արտաւազդ (հերանոսական) եւ այլն:

Բ. - ՀՆԴԱՆԻՐԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐ ԿՐՈՂՆԵՐ

Հայրը, Մայրը, Որբեւայրի, Վանահայր, Արեղայ, Թիկնապսի, Ներկարպ, Երէց, Քարտաշ, Ժամկոչ, Դարբին, Հարճ, Իշխան, Իշխանուիկ, եւ այլն: Նրանք անուանուած են ըստ ընտանեկան, հասարակական, ընկերային, դերերի, պաշտօնների, արիենտների, դասակարգերի եւ նման կարգի այլ դրոյքների համաձայն ու արտայայտում են դրանց առընչուղ բնորոշ յատկութիւնները:

Գ. - ՏԱՐԵՐՔՆԵՐ ԵՒ ԳԵՐԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Յոգմակի՝ Միգամուշներ, Յովիկներ: Եզակի՝ Դեւ, Թզուկ, Ճերմակաւոր, եւ այլն: Դրսեւորում են յոյզ, ներքին շարժում, գաղափար եւ նոյն կարգի երեւոյքներ:

Դ. - ՏԵՂԻ ԲԵՐՈՒՄՈՎԿ

Ներսը Եղողները, Դուրսի Աղմուկը, Ամէն Կողմէ, եւ այլն: Արտայայտում են գործողութիւններին կից, հաւաքական ներկայութիւններ:

Ե. - ՄԻԱՀՈՐ, ԶԱՏՈՒԱԾ ՈՒ ԽՄԲԱԿԱՆ

Ընկերը, Մէկը, Միւսը, Բոլորը, եւ այլն: Բնորոշում են յարաբերական դրութիւններ ու վիճակներ:

Զ. - ԶԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐ

Սարսափելի Աղմուկ, Զայներ, Զայն: Հաղորդում են հոգեվիճակ, զգացում ու միտ:

Է. - ՎԻՃԱԿԱՓՈԽՈՒԱԾՆԵՐ

Ամենայայտնի օրինակը՝ Աղջիկը / Քողաւորը / Մերա երրեսակն է, որ միեւնոյն էութեան տարբեր հանգուաններն է արտայայտում. ապա՝ Վանահայր / Յովհաննելս ու Իշխանուիր / Մարիամ զոյգը: Կան նաևս ուրիշներ: Այս ձեփի թերումով, երեսնե գործող անձանց բուն անուններին մենք հանդիպում ենք արարենի մէջ տարածուող գործողութիւնների ընթացքում: Վանահայրի ու Իշխանուիր(ի)ու, անձնանունները՝ Յովհաննելս ու Մարիամ, յայտնում են հանգոյցային ու նշանակալից պահում միայն՝ դրամայի կեսում: Միեւնոյնն է Օշիմին իրեւ Պայլ ու Ռիբախին Ամորի նանաչելու պարագան: Նկատի ունենալով եօր խմբաւորում մերի մէջ դրսեւորուող գաղափարները եւ նանաչելով դրանց բանականութիւնը, դերասանն ու բեմադիրը աւելի խորացած ու յստակ ձեւով են կարող կեանի կոչել հարկաւորը:

«Շարժումը միջոց իր ներքին աշխարհը արտայայտելու» ենթավերնագրի տակ Շանք, ըստ Վ. Վունտի մշակած համակարգի, բացատրել է.

(...) շարժումները կ'անցնին զարգացման երեք աստիճաններով եւ չիմա ալ միշտ կը խաղան երեք գեր:

Նախ՝ անոնք պարզ արդինք-պատասխան մըն են ներքին յուզական վիճակի մը եւ կը ծառայեն կեանքի բուսական պէտքի մը բաւարարումին, գլխաւորապէս սնունդին ու սեռին:

Երկրորդ անոնք իրենց այդ գերը խաղալու ժամանակ կը դառնան հասկընալի ուրիշներուն համար, բոլորովին կրաւորական կերպով, երբ շարժումը կատարողը բան հասկընելու մասին բնաւ չի մտածեր:

Եւ երլորդ՝ անոնք կը դառնան այս կամ այն աստիճանի ներգործական միջոց մը կենդանին համար ուրիշներուն հետ հաղողակցելու, այսինքն՝ իր ուզածն ու մտածածը ուրիշին հասկընելու: Այս աստիճանին գրայ շարժումը դարձած է արդէն հոգեկան արտայայտութեան գէնք մը, գործիք մը:

Աղջիկը / Քողաւորը / Մերա դրութիւնը կառուցուած է նշուածի համաձայն:

¹ «Սեռն ու նիւթը բանահիսութեան», ԼՇԵ, Ե. Հատոր, Էջ 231-232:

Լեռն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Շանք գործող անձանց վրայ յաւելացնելով իր մտածողութիւնը նրանց վեր է ածում խորհրդանիշների՝ ներքին իմաստ մատնանշող երեւոյթի: Հեղինակը, մտածումը նմանեցնում է բափանցիկ քոյի, որ նետուելով դէմքի ու կերպարանի վրայ, արդէն ծանօթ էութեանը միանգամայն նոր խորհրդաւորութիւն ու ազ նւութիւն է պարգեւում եւ անհատականը վեր է ածում ընդհանրականի: «Իզուր չէ, որ իրար յաջորդող անվերջ դարերը սեւ կամ ներմակ քոյ մը կը նետեն լացող այրիի, ինչպէս եւ լացող խնդացող նոր-հարսի գլխուն: Այդ քոյի մը պարզ յաւելումն է, որ անհատ կինը սիմուլ կը դարձնէ, որովհետեւ քոյը սիմուլ մըն է եւ սիմուլը ինքը քոյ մըն է»¹, նկատել է տալիս նա:

Եթէ այս բանաձեւը կիրառելու լինենք բեմախաղերի գործողութիւնների ու գործող անձանց մօս, պիտի նկատենք, որ բոլորն էլ դասաւորուած են նշուած մտածողութեան ու համակարգի համաձայն եւ տարրեր ասախինանի, տարրեր մակարդակի մտքեր են արտայայտում: Շանք իր գործողութեան վայրերը եւ գործող անձանց ընտրում ու կերտում է պարզ, խիստ խտացումներով եւ էական մտածողութեամբ: Միեւնոյն հիմունքներով են դրուած նրա բեմախաղերի արար ների ու տեսարանների բաժան նուումները: Դրանց ընտրութիւնն ու դասաւորումը նոյնիքան ներհուն մտածողութեամբ է կատարուած ու դրուած, որքան գործող անձանց հոգերանական կառոյցը:

Շանքի բատերական մտածողութիւնը, պատմական նիւթեր շօշափող բատերակների մէջ, ընդհանրապէս արարուում է բազմարիւ գործող անձանց միջոցով: Սակայն բեմախաղերի կառոյցը ստուգելիս, պիտի նկատենք որ այդ բազմարիւ գործող անձինք, արարների մէջ բեմ են մտնում շատ աւելի զուսպ ու սահմանուած քուով: Դա երկը բեմ հանելու համար նախատեսուած միջոցառում է: Եթէ ճիշտ դերարաջնուամ կատարուի, դերասանը առանց ծամբարեւնուելու, հետաւորութիւն պիտի ունենայ մէկից աւելի դերեր կատարելու: Շանքի բոլոր բազմամարդ բեմախաղերն էլ գործ նական լուծումներ ունեն եւ ունակ են առանց որեւէ կրնատումների, սակաւաքիւ դերասաններով բեմադրուելու եւ միեւնոյն բազմամարդ տպաւորութիւնը ստեղծելու: Դա հնարաւոր է, քանի որ բատերակները կառուցուած են հէնց այդպիսի սկզբունքով ու մտածողութեամբ: Նոյն սկզբունքներով են գրել բազմարիւ հին ու նոր անուանի բատերագիրներ. օրինակ՝ Շէսպիր,

¹ «Բանահիւսական նարտարապետութիւն», ԼՇԵ, Ե. Հասոր, Էջ 409:

Կլողէլ ու Բրեխտ: Խնդիրն իրագործելու համար միայն ուշիմ ու հմուտ բեմադիրի է հարկաւոր:

ԹԱՏԵՐԱԿՆԵՐԻ ԽՈՇՀՈՒՄԴՀԸ

Շանթի թատերական մտածողութեան մէջ ներառուած է նաև նրա ժամանակակից կեանի ներքաղաքական, ընկերային, ազատագրական շարժումները, հնուց ժառանգուած քրիստոնէական-հեթանոսական գաղափարները, կայսերական ու ժողովրդավարական վարչակարգերը, վրէժն ու բաւուրինը: Այս բոլորը բեմ հանող մտածողութիւնը, իր բոլոր ունակութիւններով ու եզակի արժանիքներով հանդերձ, մինչ օրս դերասանների ու բեմադիրների մօտ դեռ մնում է չգիտակցուած, եւ չէ օգտագործում իբրեւ հաւաքական նկարագիր կերտող միտում ու միջոց: Զէ ըմբռնուած նաև նրա հետանկարը. «Հոմերոս, Հերուդոտոս, Սոկրատէս անուններ են, որոնք դարեր ու դարեր յոյնը յոյնին են կապեր, անոր յոյս եւ հպարտութիւն են ներշնչեր իր ատրուկ ու ծանր օրերուն բուրքի լուծի տակ, եւ ժմ-րդ դարու սկզբին ազատութիւն են բերեր անոր, այն՝ Էսֆիլէսը, Պլատոնն ու Արիստոտէլէսը: Եւ պարապ խօսք չէ չգիտեմ որ ամ գիտացի պետական մարդուն բացական-չութիւնը, թէ ինքը առանց վարանելու մէկդի կը նետէր Հնդկաստանը, իրեն պահելու համար իր Շեխսպիրը»¹:

Շանթի գործող անձերի մէջ միակ արուեստագէտը՝ արձանագործ Երուանդը, Ճամբռուն վրայի մէջ գիտակցել էր, որ որքն ու խեղճը հայ ժաղքնու մօտ, արդի ապրանք են դարձել: Նա իր ժամանակի գարկերակը զգալով, սկսել էր այդ շուկայի համար բանել ու ատեղծագործել: Երուանդ, յեղափոխական ընկերոջը՝ Վահրամին, անկեղծօրէն խոստվանել էր. «Մարդս ինքն իր մէջ, ինքն իր ներքին, իր սիրած, իր շինած, իր ուզած աշխահին մէջն է, որ կրնայ միայն գոհ ըլլալ»²: Շանթ իր ինքնուրոյն գործող անձանց շարքից վերջին՝ Օշինի խօսքնով, վերջապէս եղակացը էր. «Մարդիկ նախ եղափին մէջ կը յաղբուին. հոգիին մէջ չյաղբուածը անպարտելի է»³: Պատահական չէր, ուրեմն որ այս խօսերից յետոյ, Շանթ Զաւոյի հետ միասին չէր, ուրեմն որ այս խօսերից յետոյ, Շանթ Զաւոյի հետ միասին դիմեց իրսէնին: Հայացուեցին Բրանդը եւ ժողովուրդի թշնամին:

¹ «Ի՞նչ է ազգութիւնը», Հայրենիք Ամսագիր, Յունու. 1923, էջ 22: ԼՇԵ, Ե. Հատոր, էջ 22:

² Գարուն Ալմանախ 1 (1910), Մուկուա, էջ 83:

³ Հայրենիք Ամս. Յուլիս, 1932, էջ 5:

Լեւոն Շանք եւ իր բատերական մտածողութիւնը

Ինք հայերէնով խտացրեց, նշուած վերջին բեմախաղի եզրակացութիւնը: «Աշխարհիս երեսին ամենէն ուժեղ մարդք ան է, որ մինակ կը մնայ»¹:

ՎԵՐՃԱԲԱՆԻ ՓՈԽԱՐՔՆ

Թատերաբանախօսութեան այս բաժնում բեմադրուեց Շղայւածը խաղի երրորդ արարի Ա. եւ Բ. տեսարանները: Տալիս ենք դրանց համառոտ բովանդակութիւնը:

Ինը մը ներկայացնում է՝ Շաղկաձորի մէկ ժայռոտ կտորը: «Ճակատը ձորի բարձր եզրին է, շրբունքին Անիի պարիսպներուն մէկ մասը: Վարը քարքարոտ:

Իրիկնամուտ: Զորը բանձր ստուերի մէջ, վերը պարիսպները դեռ լոյս ունին իրենց վրայ՝ դեղնաւուն կարմիր մը, որ տեսարանի կէսերուն ժիշ-ժիշ կը դժգունի ու կը մարի:

(...)

Ճակսի ժայռերուն մէջէն ներ կածանով վար կ'իշնէ Նաղաշը գլխահակ ու մտածկուտ: Ներս կը նետուի ճախէն Հարթը, կու գայ ու կը կենայ ժայռին ստորոտը, կածանին թերանը:

ՀԱՐՁԼ - (Նաղաշի առջեւը կտրելով, երբ իրեն կը հասնի) Կեցի՛ր:

ՆԱՂԱՇԼ - Ի՞նչ կ'ուզես, քուրիկ:

ՀԱՐՁԼ - Ուր է քու Արտաւազդը, որ դուրս պիսի գար աշխարհը բանդելու: Ի՞նչու կը նայիս գետին. նայէ՛ ինձի, աչքերուս. պատասխան տուր. ու՞ր է քու Արտաւազդը:

ՆԱՂԱՇԼ - Հարցու՛ր քու հոգիիդ, քուրի՛կ, հարցու՛ր քու հոգիիդ»:

(...)

Առաջարկը բորբոքում, առելի շփոր ու փորորիկ է ստեղծում Հարթի հոգում: Նրան դնում է Ժխտական դիրքի մէջ: Նաղաշ խնդրում է՝ «Թող ինձի մինակ, քուրիկ, թող իմա ինձի մենակ. կու գա՞ս իսալու, երբ վերերդ սպիանան, երբ խոցերուդ մրմուռը մարի»: Այսույթ Հարթը զայրացած լինում է նրան: Նաղաշ մնում է մենակ ու մտախոհ:

¹ Հ. Իրսէն, Ժողովուրդի թշնամին, բարգմ. Լեւոն Շանք, Հրատ. Համազգայինի Թատերասերներու, Պէյրութ, 1968, էջ 95:

Արքի Յովհաննիսեան

Վերջապէս Ծաղկաձորի մէջ նրան լսելու համար եկած բազմութիւնը մօտենում է: Կարճ լուրիմից յետոյ նրանց դիմելով, Նաղաշ՝ ուժեղ, հպարտ ու տիրող շեշտով, արտասանում է խարի կինդրոնում դրուած իր ուշագրաւ ներիուն նառը եւ բոլոր ներկաները, բեմ ու հանդիսաւուն միատեղ, իրենց եռութեան խորքում, Ազատ Մասիսի Խորին Խորեղի խաւարի մէջ, հանդիպում են Թզուկին, Կեսմիքի Դեւին ու Արտաւագդի Զայնին, որը կրկին լուսում է խաւարի մէջ լսուող դարբինների աւանդական ծէս-անէծի երեք զարկերի ու դրանց արձան գանձող Թզուկինների փառապանձ երգի ներքոյ... :

Արքի ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Փարիզ /Երեւան

Մայիս 1991